

# ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

## մա ս առաջին

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

### I

Քուռ գետի ձախակողմեան մասի մի ծուռ փողոցով անցնում էր մի երկուսասարդ: Սգոտոսի շոք օրերից մէկն էր: Արեղակը երկաթի պէս տաքացրել էր փողոցի սալաշատակը և տների պատերը:

Յոլը այնքան ճնշող էր, որ անցորդը հազիւ կարողանում էր շունչ առնել: Երբեմն թեքւելով ձեռափայտի վրայ, նա կանգ էր առնում ծառերի շւաքում և իւր յոգնած հայեացքը ձգում տների լուսամուտներին կամ դռներին:

Ձր նայելով ամարացին կիզիչ եղանակին, նա հաղած էր ձմերային սև սիւրտուկ, այն էլ կոճակած մինչև կոկորդը: Իսկ աջ թևին ձգած էր մի մոխրագոյն վերարկու, որի փեշերը հասնում էին գետնին:

Նա փոքրահասակ էր, նիհար, բաց կուրծքը կազմւածքի համեմատ լայն էր և առողջ: Նրա դէմքի զծերը խոշոր էին, ազդու և անմիջապէս ուշադրութիւն գրաւող: Սև և խիտ ջոնքերի տակից փայլող խոշոր աչքերը վերին աստիճանի արտայայտիչ էին, խելացի և թափանցող: Մի աւանձին խրոխտութիւն էր տալիս նրա թխագոյն դէմքին կարճիկ նօսր միրուքը, մանաւանդ արծիւային քիթը, որի պնշերը յիշեցնում էին արարական նժոյգի ունեղբեր:

Հասնելով ծուռփողոցի ծայրին, նա դարձեալ կանգ առաւ և նայեց աջ ու ձախ: Այստեղ նրա հայեացքը ընկաւ մի տան պատին կպցրած թղթի վրայ: Նա մօտեցաւ և կարդաց.

«Այս տան վերին շարիում վարձով տրուում է մի մեծ, լուսաւոր և մաքուր սենեակ:»

Նա բաց դռներով մտաւ ներս: Մի նեղ, կարմրագոյն փայտեայ սանդուխդ տանում էր դէպի տան վերին շարիւ: Արագ քայլերով նա բարձրացաւ վերև և հանդիպեց մի շիկահեր, պառաւ կնոջ:

— Ի՞նչ էք կամենում, — հարցրեց կինը, որ տանտիրուհին էր:

— Յոյց տէք սենեակը:

Կինը երիտասարդին առաջնորդեց երկայն և աղեղնաձև պատշգամբի ծայրը: Սենեակը, արդարև, մեծ էր, լուսաւոր, բայց ոչ մաքուր և ոչ էլ կահաւորւած: Տանտիրուհին շտապեց յայտնել, թէ նա իսկոյն կը մաքուրի, կը կահաւորուի և արժանավայել տեսք կը ստանայ եթէ վարձուի:

— Ի հարկէ, եթէ ոչ՝ ո՞վ կը կ'ապրի այս տեսակ խոզաբնում:

Երիտասարդի ձայնը ամուր էր, խրոխտ և թանձրահնչիւն: Մի բան, որ կատարելապէս հակասում էր նրա փոքրիկ հասակին և լիովին համապատասխանում նրա տգեղ և տպաւորիչ զէմբին: Այդ ձայնը, այդ խոշոր գլուխը, այդ խելացի աչքերի սուր արտայայտութիւնը ազդեցին տանտիրուհու վրայ:

— Դուք կովկասցի էք, — հարցրեց նա:

— Այո՛:

— Ի՞նչ ազգի էք պատկանում:

— Հայ եմ:

— Ի՞նչ գործի էք:

— Աւ այժմ ոչինչ:

— Ոչի՞նչ:

— Այո՛:

— Այդ ի՞նչպէս կը լինի:

— Պատահում է:

— Իսկ սենեակի վարձը՞:

Երիտասարդին բարկացրին այդ հարցերը: Նա խնդրեց տան-

տիրուհուն պայմանները ասել, և առանց սակարգութեան վարձեց սենեակը, մի ամուսյ վարձը անմիջապէս տալով:

—Ամուրի էք,—հարցրեց պառաւը մեղմացած:

—Ամուրի եմ և այս սենեակում մենակ ես պէտք է բնակեմ: Տանտիրուհին գնաց դուրս և քիչ անցած վերադարձաւ մի թերթ թուղթ և մի մատիտ ձեռին:

—Խնդրեմ ձեր անունը նշանակէք:

Երիտասարդը գրեց.

«Արսէն Դիմաքսեան»:

Երեկոյեան նա իրեղէնները տեղափոխեց: Սենեակը բաւական խնամքով մաքրած էր և համեստ բայց ճաշակով կահաւորւած: Նա բաց արեց իւր ծրարները, կանթեղը վառեց, ամեն ինչ կարգի բերեց և, նստելով սեղանի քով, սկսեց խորհել անելիքի մասին:

Այն, Արսէն Դիմաքսեանը շատ բաներ ունէր անելու, շատ ծրագիրներ ունէր ապագայի մասին, շատ գործերի մէջ պիտի խառնուէր: Իսկ առ այժմ մի բան առաջինն էր—հարկաւոր էր մի պաշտօն ունենալ:

Միայն երկու շաբաթ էր, որ նա վերադարձել էր արտասահմանից: Գալուց մի քանի օր անցած նա գրաւոր խնդիր էր տւել Ներսիսեան դպրոց, որ իրան յանձնեն ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան դասերը: Մի քանի հոգաբարձուներից նա խոստում էր ստացել, սպասում էր հոգաբարձական նիստին:

Առ այժմ նա գրպանում ունէր հօրից ստացած վերջին գումարը, որով պէտք է ապրէր մինչև պաշտօն ստանալը: Նրա հայրը դաւառում մի յայտնի կալւածատէր էր: Նա առանց որ և է պաշտօնի էլ կարող էր կառավարել: Բայց հօր և որդու մէջ մտել էր մի սառնութիւն, որ հետզհետէ աւելի ու աւելի անջատում էր նրանց:

Բանն այն է, որ Մարգար աղա Դիմաքսեանը որդուց պահանջել էր գիմնադրան աւարտելուց յետոյ այլ ևս ուսումը չը շարունակի: Նա միայնակ էր, ուրիշ որդի չուներ, և ուզում էր, որ Արսէնը իւր օգնականը լինի՝ բազմաթիւ այգիները, վարելահողերը, խանութները և այլ կալւածները կառավարելու: Որդին չէր համաձայնուել: Կոշտ, ինքնակամ, յամսու հօրը չափազանց զայրացրել

էր այդ ընդդիմութիւնը, և նա վերին աստիճանի սպառնողական մի նամակ էր ուղղել որդուն:

Արսէնը դրական եղանակով պատասխանել էր, թէ ինքը պէտք է լինի այն, ինչ-որ կամենում է և բնաւ մտադիր չէ, «նացած սերնդի կամքին ստրկանալ»:

«Գալով ձեր օգնութիւնը, որից ինձ չէք ուզում առ այժմ զրկել, ես կընդունեմ նրան մինչև ուսմանս վերջը, ինչպէս պարտք: Դուք կարող էք զրկել ինձ օժանդակութիւնից, իսկ ազատ կամքից — երբէք»:

Այս վճռական պատասխանը կատաղեցրել էր հօրը: Հաշտութիւնը երկու բնաւորութիւնների մէջ դարձել էր անկարելի:

Շատ հոգսերի շարքում Արսէնը ուներ և հօր պարտքը հատուցանելու հոգսը: Թւում էր նրան, որ եթէ իւր ասածը չը կարողանայ կատարել — թոյլ, ստախօս և, որ գլխաւորն էր նրա համար, ինքն իրան հակասող մարդ կը լինի: Ընկերները յանդիմանում էին նրան այդ մասին, համարելով նրա վարմունքը անտակտ, անհաշիւ: Բայց նա ամենքին տալիս էր միևնոյն դրական պատասխանը.

— Եթէ մենք ուզում ենք անլախ լինել, առաջին պատերազմը մեր ծնողների դէմ պէտք է սկսենք:

Ահա ինչու նա աւելի լաւ էր համարում հասարակ ուսուցչի պաշտօն ընդունել, քան հպատակել իւր հօր կամայականութեանը: Այժմ նա ակամայ զգում էր մի անհանգստութիւն. ինչ կը լինի, եթէ նրան իսկոյն պաշտօն չը տան:

Նրան վախեցնում էր ոչ թէ նիւթական պակասութիւնը, ոչ թէ այն, որ կարող էր մի օր անօթի մնալ, այլ այն, որ մի գուցէ ստիպւէր մէկից պարտք վերցնել, թէկուզ այդ մէկը լինէր նրա մտերիմ ընկերը:

Ներս մտաւ տանտիրուհու ծառան և ընդհատեց նրա մտքերը: Ցարօրինակ էր այդ ծառայի կերպարանքը: Ռա անորոշ տարիքի մի արարած էր անկանոն կազմաւածքով: Նրա կուչկուչաժ յօնքերի տակ բուն դրած աչքերից մէկը կոլորակ էր, միւսը նշաձև: Երես ասած բանը նա գրեթէ չունէր: Շէկ միրուքը սկսում էր ուղիղ աչքերի տակից և, հասնելով ծնօտի ծայրը, այստեղ կազմում էր զըզզաւած բրդի կտորի նման մի բան: Դիտողը կը նկատէր, որ նրա բերանի մի անկիւնը միւսից բարձր է:

— Այ տղայ, դու ի՞նչ ազգից ես:

— Հայ եմ, — պատասխանեց մի բարակ, համարեա կանացի, ձայն:

— Ո՞րտեղացի ես:

— Քեաւարցի:

— Քեաւարը սրտեղ է:

— Նոր-Բայազէզում:

— Անձնդ:

— Սիրական:

Եթէ երբ և է Դիմաքսեանը տեսել էր մի սարսափելի կոնտրաստ, այդ կարող էր լինել ծառայի կերպարանքը և նրա անունը: Յաջորդ հարցերը պարզեցին, որ Սիրականը անտուն, անտէր, մի խեղճ մարդ է, ոչ ծնողներ ունի, ոչ քոյր, ոչ ազգական:

— Լսիր, — ընդհատեց նրա խօսքը Դիմաքսեանը, — դու ինձ հաւատարիմ ծառայիր, ես քեզ կը վարձատրեմ: Գիտե՞ս, դու ինձ դուր ես գալիս. կարգալ գիտե՞ս:

— Մի քիչ:

— Ես քեզ էլի կը սովորեցնեմ: Եթէ կամենաս, ուուսերէն էլ դաս կը տամ:

Ուրախութիւնից Սիրականի շիւ աչքը փայլեց: Նա մէջքից խոնարհ թեքեց և գլուխ տւեց:

Թէյ խմելուց յետոյ, Դիմաքսեանը նստեց պարապեկու: Դեռ գիմնադիտի նստարանից նա աշխատակցում էր մի լրագրի Ընկերներից շատերը գուշակում էին, թէ ժամանակով նա լաւ քննադատ կամ քարոզիչ կարող է լինել: Գնալով արտասահման, նա շարունակեց աշխատել նոյն լրագրում, հետզհետէ ընդարձակելով գրութեան շրջանը և գաղափարը: Վերջին ժամանակ նա քաղաքական յօդուածներ էր գրում առաջ Լէյսցիգից, յետոյ Յիւրիսից:

Հետեւեալ օրը նրա մօտ եկաւ բժիշկ Սալամբէկեանը, որի հետ նա աւարտել էր գիմնադիտի դասընթացքը: Դա սև միրուքով, նիհար դէմքով, տկար մարմնով մի երիտասարդ էր: Նրա դէմքի վրա դրոշմաճ էր հոգեկան մի անբացատրելի դժգոհութիւն: Դիմաքսեանի հետ նա մօտիկ ընկեր էր, և միմեանց համակրում էին: Վեց և կէս տարի իրարուց հեռու ապրելով, նրանք անընդհատ

Թղթակցել էին, և տեղերի հեռաւորութիւնը աւելի մօտեցրել էր նրանց սրտերը:

—Շնորհաւորում եմ,—ասաց բժիշկը, Թոյլ և յոգնած կերպով ձեռք մեկնելով ընկերոջը,—սենեակդ վատ չէ: Բայց դա վայրենիների թր ցեղին է պատկանում:

Խօսքը Սիրականի մասին էր, որ այդ միջոցին սամօվարը ձեռին դուրս էր գալիս սենեակից:

—Մի ծաղրիլ,—պատասխանեց Դիմաքսեան մի տեսակ դժկամակութեամբ,—Ֆիզիօնոմիստների դարը անցաւ:

Բժիշկը լռեց, փոքր ինչ շփոթւելով: Վայելչութեան օրէնքը չը Թոյլ տւեց նրան հակառակել. Դիմաքսեանը տգեղ էր:

—Այսօր պէտք է ժողովենք,—հարցրեց նա, խօսքը փոխելով:

—Ո՛չ, վաղը երեկոյեան: Անպատճառ եկ:

—Ի՞մ գալուց ինչ օգուտ, Թոյ նրանք գան, որ խօսելու և գործելու ակորժակ ունեն:

—Անկարելի է, դու անպատճառ պէտք է գաս: Ես կազմել եմ մի ծրարգիր մեր գործունէութեան մասին: Ես այն կարծիքի եմ, որ մեր կռիւը պէտք է սաստիկ լինի: Հարկաւոր է մեծ վստահութիւն և քաջութիւն ջնջելու և հիմնադատակ անելու հինը, անօգուտը, քնասակարը:

Նա շարունակեց նոյն ոգևորութեամբ: Երիտասարդութեան բարոյական պարտքերը շատ են, իսկ նա բոլորովին այդ չէ զգում: Կուլելով հների դէմ, պէտք է հետամուտ լինել և՛ նորերին, հարւածել և՛ նոր սերնդին, եթէ սա չի կատարիլ իւր դերը:

—Բայց ամենից առաջ հարկաւոր է կազմակերպել մի փոքրիկ խումբ: Մենք երգւել ենք նւիրել մեզ հասարակական գործունէութեանը, պէտք է կատարենք այդ երդումը:

—Վաղը հիվեր կը լինեն քեզ մօտ:

—Ես հրաւիրել եմ Բարաթեանին:

—Մէկէլ օրը ստացաւ կրակից ապահովող ընկերութեան գործակալի պաշտօն: Յետոյ:

—Վէքիլեանին: Օ՛, առանց իրաւունքների իրաւաբանին: Գեղեցիկ գոյգ ես ընարել, արժէ նրանց մի լծի տակ տեսնել: Լաւ էլ ու՛մ ես կանչել:

—Մսերեանին:

—Ահա մարդ, որ միշտ խոստումներով է կերակրում: Կարծեմ, նա վերջը տէրտէր պէտք է ձեռնադրուի:

—Լսիր, բժիշկ, կատակը սազ չի դալիս քեզ, երբ մեր ընկերներին ես ծաղրում, մանաւանդ Մսերեանին:

—Կատակ չեմ անում: Ինքդ ասա, ուրիշ ի՞նչ կարելի է սպասել մի մարդուց, որ համալսարանների համար բոլոր ֆակուլտետները անցել է և ոչ մի տեղ չէ աւարտել:

Մի ասիլ է՞ աւարտելը, այլ ասա շին թողել, որ աւարտին:

—Այո, շին թողել իւր անհանգիստ լեզուի շնորհով:

—Անհանգիստ, բայց ճշմարտախօս լեզուի, — դուք Գիմաքսեանը, և նրա աչքերի թափանցող բիբերը պլոտեցին իրանց պարզ շրջանակների մէջ: — Այդ լեզուն շատ է փնասել իւր տիրոջը: Բայց ինչպէս անարատ սիրտ, Մսերեանը անգնահատելի է: Թողնենք խօսակցութիւնը, ես մի քանի կարևոր նամակներ ունեմ գրելու:

—Ուրեմն, ցը տեսութիւն:

—Յը տեսութիւն. վաղը երեկոյեան ես քեզ անպատճառ կը սպասեմ:

Բժիշկը գնաց:

## II

Նիէսորուայ դէմ Գիմաքսեանը հագաւ տաք սիւրտուկը, կոճակեց մինչև կոկորդը և, վերարկուն թեւին ձգելով, դուրս եկաւ: Նա այցելեց ներսիսեան դպրոցի հոգաբարձուներից մէկին և իմացաւ, որ դասերը գրեթէ ստացած պէտք է համարել:

—Մեզ համար, — ասաց հոգաբարձուն, — շատ ուրախալի է ձեզ պէս կրթւած ուսուցիչ ունենալ մեր դպրոցում, ձեր անունը ձեզանից առաջ է մեզ հասել:

Գիմաքսեանը զգաց մի թեթեւութիւն: Այժմ նա ապահովւած է ուրեմն և կարող է յուսալ, որ իւր պարտքը մաս մաս կը վճարի հօրը: Բայց աւելի հաճելի էր նրա ինքնասիրութեան համար հոգաբարձուի ասածը. «ձեր անունը ձեզանից առաջ է մեզ հասել»: Այս դարձածը նրան մի առանձին աշխոյժ տւեց, և նա ողևորեց:

Միւս օրը երեկոյեան ժողովուրդին նրա ընկերները: Առաջինը

եկաւ կրակից ապահովող ընկերութեան գործակալ Բարաթեանը— մտա քսան ու հինգ տարեկան, գեղեցիկ դէմքով, առողջ կազմածքով և զւարթ ու սիրուն աչքերով մի երիտասարդ: Նա հագնւած էր ամենավերջին մոդայով և խելոյն աչքի էր ընկնում իւր ձեւերով և շարժումներով: Երեք տարի Պետերբուրգում և հինգ տարի արտասահմանում ապրելով գիտութեան մի որոշ պաշարի հետ նա իւրացրել էր և արտաքին վայելչութեան մի խոշոր պաշար: Նրա դէմքի վրայ խաղացող ուրախ ժպիտը արտայայտում էր բուռն կենսականութիւն: Մի ժպիտ, որ հանդիպողին անմիջապէս տրամադրում էր դէպի այդ երիտասարդը:

— Հիւանալի է, — գոչեց նա, — դիտելով Դիմաքսեանի սենեակը, եթէ շրջապատող կլիման էլ համապատասխան է, այն ժամանակ շնորհաւորում եմ յայնդ ընտրութիւնդ:

— Դարձեալ կլիմա:

— Այո, սիրելիս, մոռացել ես, թէ ուսանող ժամանակ քո խոնարհ ծառան ինչպէս էր սենեակ ընտրում: Առաջ դիտում էի շըրջակայքը, յետոյ կացարանը, առաջ շնչաւորներին, յետոյ անշունչը:

— Եւ միշտ ինձ էլ խորհուրդ էիր տալիս քեզ հետեւել:

— Իսկ դու չէիր հետևում: Իզուր, երիտասարդը պէտք է կեանք վայելի, իսկ ամուրին— նա մանաւանդ:

— Կեանք մարդավարի կերպով և ոչ թէ ամեն մի անկիւնում կանանց կօշիկների հետք որոնի:

— Բայց ես այնքան չեմ որոնել, որքան իրանք են ինձ գտել: Լաւ, ես քեզ հետ չեմ վիճիլ, յայտնի է, որ կանանց մասին մեր գաղափարները տարբերւում են: Ահա գալիս է Ֆեմիզայի արժանաւոր մանկաւիկը:

Դռները բացւեցին, ներս մտաւ միջին հասակից քիչ ցածր կոլորակ դէմքով, երկարաձե քնթով, մաքուր սափրած այտերով մի երիտասարդ: Կանգնելով դռների առաջ, նորեկը զլխարկը փորի վրայ երկու ձեռներով բռնած, մէջքից թեքւեց և կէս հեզնական ու կէս սիրալիր մի ժպիտ երեսին գլուխ տւեց:

Վէքիլեանի բարեկրու մշտական եղանակն էր այդ, որ գործադրում էր ամեն տեղ, ամեն ժամանակ և ամենքի առաջ:

Նրա եռեւից երեւացին բժիշկ Սալամբէկեանը և մի քանի ֆակուլտետներ անցած Մսերեանը: Տարիքով ամենից մեծ, կազմւածքով խոշոր Մսերեանի դէմքը խորշումած էր, քոնքերի մազերի մէջ արդէն փայլում էին սպիտակներ:

Ներս մտաւ թէ չէ՛ նա հաստ ձեռափայտը և լայնեզր զլխարկը գրեց սեղանի վրայ և գոչեց.

— Արսէն, եթէ մարդ ես — ինձ մի բաժակ թէջ:

Սիրականը ներս բերեց սաճօլարը, և հիւրերը տեղաւորեցին նրա շուրջը:

Սկսեց ընկերական մտերիմ խօսակցութիւն: Սենեակը աղմկեց հետզհետէ բարձրացող ձայներով: Նրանք միմեանց հաղորդում էին շրջապատող հասարակութեան ահառութեան, անկրթութեան, նախապաշարմունքների, բռնութեան հարստահարութեան և այլ ու այլ վատ երևոյթիւների նորանոր փաստեր:

Ամեն ինչ նրանց աչքում միջին էր երևում: Հասարակական կեանք չը կայ: Մարդիկ մտածում են միմիայն իրան նիւթականի մասին: Ժողովուրդը խարխափում է տգիտութեան մէջ: Հին սերունդը բռնակալ է, նորը թոյլ, հալածւած, ճնշւած:

Վաճառական դասը ապականւած է, հարստահարող, փողամոլ: Երիտասարդութիւնը բարոյապէս փչացած է:

Հայրենիքի խնդիր չը կայ, իդէալ չը կայ:

Աւսումնարանները պատրաստում են տիրացուներ:

Գրականութիւն չը կայ: Լրագրութեան մէջ տիրում է շարականի հոգին:

Ամեն ինչ կարօտ է արմատական վերանորոգութեան:

— Պարոններ, — բացականչեց Մսերեանը, որ փոքրիկ ժողովում մի տեսակ նախազանի դեր էր կատարում, — սկսենք դործել ձեռք ձեռքի աւած: Մեր փոքրաթիւ կրօնքերը դէմ տանք չինական պատին: Խորասկենք նրան, որ անջատում է մեզ եւրոպական քաղաքակրթութիւնից:

Նա խօսում էր ոգևորւած, ինչպէս մի կրակոտ պատանի: Այն ինչ տարիքը երեսնից անց էին: Երբեմն նա իւր խօսքը զարդարում էր յայտնի հեղինակների դարձւածներով: Ստէպ ստէպ չիշում էր նալբանդեան, Աբովեան, Նազարեան անունները, համարելով

նրանց առաջին զինւորներ ժողովրդի առաջադիմութեան համարս։  
Նա պնդում էր, թէ պէտք է գնալ այդ մարդկանց հարթած  
շաւղով։

Նրա ձայնը երերում էր, ականջները և այտերը կարմրել էին,  
ձեռները դողում էին և լեզուն շփոթւում։

Ընկերների շրջանում նա վայելում էր ամուղղելի իդէալիստի  
մականունը։ Նրա խօսքերից բուրում էր բուռն ոգևորութիւն և  
խորին հաւատ դէպի մարդկութեան երջանիկ ապագան։ Ժամանա-  
կակից ախտերը — բռնասիրութիւն, հարստահարութիւն, ընկերա-  
կան ոգու բացակայութիւն և այլն այլն նա համարում էր ներկայի  
ճնունը։ Կ'անցնի ժամանակ, կը մաքրւի մարդկութիւնը այդ ախ-  
տերից, և կը տիրէ այն իդէալական կեանքը, որին ձգտել են և  
ձգտում են աշխարհի ամենաբարձր սրտերը, ամենազօրեղ հանձարները։

— Այո՛, պարոններ, — աւարտեց նա իւր ատենաբանութիւնը, —  
մենք էլ լինենք այդ զօրապետների գոնէ յետին զինւորների շար-  
քում։ Կուենք և դործենք։ Մեր ազգը փոքրիկ է, թոյլ, անպաշտ-  
պան, չը թողնենք, որ նա խաւարի մէջ մնայ։

Նրան յաջորդեց Դիմաքսեանը իւր ծրագրով, որի ընդհանուր  
կէտերը նա պարզեց։

Նա խօսում էր համառոտ և կտրուկ ոճով։ Յոյց էր տալիս այն  
գլխաւոր հասարակական վատ երևոյթները, որոնց դէմ պէտք է  
մաքառէր նոր երիտասարդութիւնը։

— Բայց ես կրկնում եմ, ամենագլխաւորը ընկերական միու-  
թիւնն է։ Եթէ մենք իբրև անհատներ չը դաւաճանենք մեր ընտ-  
րած սկզբունքներին, շատ բան կարող ենք անել։

Ամենից քիչ խօսում էր Վէքիլեանը։ Նա շարունակ ժպտալով,  
ամենքի հետ համաձայնում էր։

Բարաթեանը մասնակցում էր խօսակցութեանը զւարթ եղա-  
նակով։ Նա նոյնպէս ոգևորում էր, բայց չէր զրգուում։ Նա չէր  
հարւածում հասարակական կեանքի վատ երևոյթները, ինչպէս Դի-  
մաքսեանը, Մսերեանը կամ նոյն իսկ ծուլախօս Սալամբէկեանը,  
այլ հեգնում էր և ծաղրում։

Երբեմն նա ամենալուրջ խնդրի մէջ խառնում էր մի սուր կա-  
տակ։ Նա ասաց, թէ ոչ մի գործ չէ կարող կենդանի կերպով

առաջադիմել, եթէ նրա մէջ խառն չէ կինը: Զը պիտի միակողմանի լինել, կարծելով, որ հասարակական քաղաքակրթութիւնը միայն մարդկութեան մի կիսի ձեռքով է կատարուում: Նա առաջարկեց մի քանի տիկիններ և օրիորդներ դրաւել ընկերական ժողովները: Մտերեանը ընդդիմացաւ այս մտքին: Նա կանանց ատում էր իբրև անհասնելի, իսկ իբրև դասակարգի պաշտպանում էր նրանց իրաւունքները:

Բժիշկ Սալամբէկեանը հաւանեց Բարաթեանի միտքը: Վէքիլեանը անորոշ կերպով ուսերը շարժեց:

—Վանայք,—կրկնեց Դիմաքսեանը,—այո՛, ես էլ եմ պաշտպանում նրանց իրաւունքները, բայց զրոյնց գտնենք այնպիսիներին, որ համաձայնէին կամ կարողանային մեզ օգնել:

—Ես ճանաչում եմ մի քանիսին,—պատասխանեց Բարաթեանը,— որ կարող էին մեզ համար օգտուէտ լինել: Ախոսս միայն գեղեցիկ չեն, իսկ ես, ինչ թագցնեմ մեղքս, միայն գեղեցիկներին եմ սիրում:

Դիմաքսեանը գրգռեց ընկերոջ վերջին դարձածի դէմ:

—Բաւականն է,—գոչեց նա,—ժամանակ է թողնել այդ նոր ձևի կռապաշտութիւնը: Մենք պէտք է խոնարհւենք խելքի զօրութեան առաջ և ոչ գեղեցիկ աչքերի և սիրուն այտերի հրապոյրից շահանք:

Բարաթեանը ժպտաց: Նա ոչինչ չ'ասաց, բայց մտածեց. «տեսնենք, այդ հրապոյրին մինչև կեանքիդ վերջը կը դիմանանս արդեօք»:

—Գեղեցկութիւնը երբեմն մարդկանց անբարոյականացնում է,—աւելացրեց Դիմաքսեանը մի տեսակ անզսպելի կրքով, ուղղակի նայելով Բարաթեանի աչքերին:

Կարծես, խօսքը նրան էր վերաբերւում: Բարաթեանը անտարբերութեամբ երեսը դարձրեց Վէքիլեանի կողմը, որ նոյնպէս խորհրդաւոր կերպով ժպտում էր: Նրանք հայեացքներով հաղորդեցին միմեանց իրանց միտքը, որ մի և նոյն բանին էր վերաբերւում—Դիմաքսեանի դէմքի տգեղութեանը:

Այդ օրից երկու շաբաթ անցած Դիմաքսեանը սկսեց այցելել Ներսիսեան դպրոցը ինչպէս ուսուցիչ: Նրա դասերը տևում էին

մին. և կէսօրւայ մէկ ժամը: Այնուհետև նա գալիս էր տուն և զգաղ-  
ւում այլ գործերով:

Ուսուցչական շրջանը նրան ընդունեց արտաքին. յարգանքով,  
ներքին նախանձով, որովհետև ամենաառաջին ուսուցիչն էլ նրա  
մէջ տեսնում էր մի զօրեղ մրցակից:

Նա հետաքրքրեց իւր պաշտօնակիցների աշխարհահայեացքով:  
Նա գտաւ նրանց շրջանում մի քանի համակրելի մարդիկ, միւսներին  
չը հաւանեց և սկսեց բացարձակ վիճել, հակառակել նրանց մոքե-  
րին և քարոզել իւր գաղափարները:

Մի ամիս չ'անցած, նա ունեցաւ մի քանի բարեկամներ և շատ  
հակառակորդներ: Ոմանք շրջապատեցին նրան, իսկ ոմանք հեռա-  
նալով կազմեցին հակառակ բանակ: Խաղաղ և ճահճացած շրջանի  
մէջ ընկաւ մի տեսակ շարժում: Ուսուցչական սենեակի պատերը  
վկայեց եզան ջերմ վիճաբանութիւնների և կատաղի հակաճառու-  
թիւնների:

Տեսուչը, թէև բարձր կրթութիւն ստացած, բայց հին հա-  
յեացքների տէր մի մարդ էր: Փորձւած, հմուտ և խորամանկ մէկը,  
որ կարողացել էր գրաւել ուսուցիչների մեծամասնութեան յարգանքը:

Դիմաքսեանը մտեցաւ նրան, այցելեց մի քանի անգամ նրա  
տունը և մի օր իւր ընկերների մօտ հետևեալ կարծիքը յայտնեց  
նրա մասին.

—Մեր Համբարեանը այն խրուիլակներից է, որ հեռւից միայն  
մարդու են նմանում:

Այս խօսքերը շուտով հասան տեսչի ականջին, և սա վճռեց  
զգոյշ լինել իւր նոր ստորագրեալի հետ:

Մի օր Դիմաքսեանը ուսումնարան մտնելիս հանդիպեց երկու  
աշակերտների, որ միմեանց հայհոյում էին փողոցային անվայել և  
կեղտոտ խօսքերով:

—Պարոններ, —ասաց նա ուսուցչական սենեակում խմբւած  
պաշտօնակիցներին, —մեր դպրոցում բարոյական դիսցիպլինա չը կայ,  
պէտք է այս մասին հոգալ:

Բոլորը զարմացած նայեցին նրա երեսին: Առաջին անգամ  
էին լսում այսպիսի պարզ բայց և անպայման խիւտ մի կարծիք  
դպրոցի մասին:

Նա պատմեց հայհոյող աշակերտների մասին՝ նա առաջարկեց ընտրել մի յանձնաժողով, պարտք դնել նրա վրայ, որ ուսուցնարանական կարգերի մասին կազմի մի ծրագիր:

—Այս դպրոցում տիրում է հին հոգի, պէտք է ամեն ինչ փոխել, վերանորոգել, պէտք է այստեղի օդը մաքրել:

—Արդեօք ինչպէս, —հարցրեց տեսուչը նուրբ հեգնական եղանակով:

—Այնպէս, ինչպէս անում են լուսաւորած երկրներում. քանդելով հինը, շինելով նորը, դուրս վանելով նեխածը, ընդունելով թարմը և կենդանին:

Մի քանի հակառակորդներ գլուխները կէս ծաղրով և կէս ատելութիւնով շարժեցին:

Տեսուչը պատասխանեց.

—Սիրում եմ ձեր ֆրազները:

—Ես սնդում եմ ընտրել մի յանձնաժողով:

Հետեւեալ օրը, երրորդ օրը, մի ամբողջ շաբաթ նա նոյնը կրկնեց: Վերջապէս, մեծամասնութիւնը համաձայնեց: Ընտրեց հինգ հոգուց բաղկացած մի խումբ, որոնց թւում, հարկաւ, և Գիմաքսեանը: Նրան յանձնեցին կազմել մի ծրագիր և ներկայացնել: Այս առաջարկութիւնը եղաւ Գերմանիայում նոր աւարտած մի մանկավարժի կողմից: Սա մտքում ծաղրում էր Գիմաքսեանին և ուզում էր տեսնել, թէ ինչ ծրագիր կարող է կազմել մի մարդ, որ ինքը մանկավարժ չէ:

### III

Երկու շաբաթ պարապելուց յետոյ Գիմաքսեանը ծրագիրը պատրաստեց և մի երեկոյ կարդաց բոլոր ուսուցիչների և վերակացունների ժողովում:

Նա հիմն ի վեր պախարսկում էր դասաւուութեան եղանակը, ուսուցիչների յարաբերութեան ձևը աշակերտների հետ: Նա աւելորդ էր համարում շատ աւանդուղ առարկաներ և փոխարէնը առաջարկում էր նորերը: Գլխաւոր կէտը աշակերտների բարոյական սնունդն էր: Այդ մասին նա խօսում էր ողբերած ոչ իբրև ծրագիր կազմող, այլ ինչպէս անմեղների մի տաղանդաւոր պաշտպան:



172-1320

Ոչ ոք նկատողութիւն չ'արեց նրան կարգալու միջոցին: Մի քանիսը միայն երկդիմի հայեացքներ ձգեցին մի Ռեա'նց երեսին:

Նա վերջացրեց, թաշկինակով սրբեց ճակատը և փոքրիկ օսկորոտ ձեռները դնելով ձեռագրի վրայ, նայեց աջ ու ձախ, պատրաստ նկատողութիւններին պատասխանելու:

Ընդհանուր լռութիւնը ընդհատեց տեսուչը շատ մեղմ ձայնով և զգոյշ ձևով:

—Պարոն Դիմաքստան, դուք վատաբանում էք մեր դպրոցը: Խօսք չունեմ, այդ բոլորը շատ տաղանդաւոր կերպով էք անում: Բայց մի բան. ձեր բուն ծրագիրը, եթէ թոյլ կը տաք այսպէս ասել, շատ, ըրը, շատ տարօրինակ է ինձ համար:

—Ոչ թէ տարօրինակ է, այլ ծրագիր բոլորովին չը կայ, — աւելացրեց գերմանական մանկավարժը:

Մէկի սառն նկատողութիւնը, միւսի խորամանկ և կծու ծիծաղը կատաղեցրին Դիմաքստանին: Նա, որ համոզւած էր իւր մտքերի անպայման ճշմարտութեանը, ինչպէս մի մոլեռանդ կղերական, ծաղրւում է բացարձակ: Ո՛չ, այդ անկարելի է:

Նրա դէմքը գունատուեց, աչքերի մէջ փայլեց կատաղութեան հուրը: Փոքրիկ մարմինը վեր թռաւ աթոռից, ինչպէս յանկարծակի հրազարկ եղած, և կաշկանդեց ամենքի ուշքը:

Բռունցքը զարկելով սեղանին, նա գոչեց.

—Ո՛չ, պարոններ, անկեղծութիւնը, միայն անկեղծութիւնը կարող է գործ առաջացնել: Խոստովանեցէք, որ իմ գրածը ձեզանից շատերի քմբին միայն դուր չէ գալիս: Բայց սա ծրագիր է և նոր գաղափարներով տոգորւած ծրագիր:

—Այո՛, — պատասխանեց գերմանական մանկավարժը, — նոր գաղափարներով, որոնք հակասում են նոյն իսկ ձեր նպատակին: Դուք դանդատուում էք, թէ մեր դպրոցում բարոյական դիւցիպլինա չը կայ, իսկ ինքներդ կատարեալ անիշխանութիւն էք քարոզում:

Անիշխանութիւն, ո՛չ երբէք: Նա քարոզում է աշակերտական մաքուր զգացումների ազատութիւն: Ուսուցիչը կամ վերակացուն չը պիտի լինի աշակերտի կամքի լիազօր տէրը, այլ նրա առաջնորդը և խորհրդատուն: Ոչ ոք իրաւունք չունէ կաշկանդել անհատի միտքը, բռնի ուժով հանել նրա գլխից մէկը — դնել միւսը, որքան

ևս փոքր լինի անհատը: Պէտք է ազատութիւն տալ աշակերտի մտաւոր և բարոյական չտականիշների զարգացմանը: Եթէ նա ընկերոջը ծեծում է և հայհոյում, մեղաւորը ուսուցիչներն են:

— Դուք էք, պարոններ, — շարունակեց նա, աւելի ուշուրէն լով, — զո՛ւք, որ մանուկ հասակից նրան սովորեցնում էք անպայման հնազանդութեան, ձեր կամքի, ձեր խելքի, ձեր հասկացողութեան, ձեր դատողութեան օրէնքներին: Դուք կատարում էք մոքի բռնակալների դեր և այն էլ մատաղ մոքերի: Ի սէր ազատ բնութեան, հեռու պահեցէք նոր սերունդը ձեր եսի ազդեցութիւնից, եղէք ժամանակակից կրթութեան միջնորդներ և ոչ ճնշող մեքենաներ: Թոյլ աւէք աշակերտի անհատական ոյժերը անկախ զարգանան, միայն հետևեցէք, որ նրանք չը փչանան վատ ուղղութեամբ: Անպայման բացակայութիւն խստութեան — ահա իմ առաջարկած դիւցիպլինան:

Նրա ճառը ազդեց մի քանի երիտասարդ ուսուցիչների վրայ: Ոմանք բացարձակ յայանեցին իրանց հաւանութիւնը: Սակայն մեծամասնութիւնը հակաճառեց:

Բարձրացաւ անասելի աղմուկ քսան ու հինգ հոգուց բաղկացած ժողովում: Մի կողմից Դիմաքսեանի կողմնակիցները, միւս կողմից գերմանական մանկավարժը, տեսուչը և մի սուար խումբ սկսեցին բարձրաձայն վիճել մինչև կէս գիշեր:

Հետևեալ առաւօտ վերակացուներից մէկը թեթևամտաբար պատմեց բարձր դասատան աշակերտների առաջ նախընթաց երեկոյեան տեղի ունեցած եղիւթիւնը: Անմիջապէս կազմեց համակրողների մի խումբ, և Դիմաքսեանը աշակերտների շրջանումն էլ կողմնակիցներ ունեցաւ:

Դասերից յետոյ, երբ նա դուրս էր գալիս դպրոցից, փողոցի դրան մտո, մութ անկիւնում հաւաքւած մի քանի հասակաւոր աշակերտներ գաղտնի ծափահարեցին նրան: Նա ոգևորւեց, մոռացաւ իւր կրած անախորժութիւնը, սրտում զգաց մի տեսակ ուրախութիւն: Մի վայրկեան նրան թւաց, թէ ինքը հալածւածների, թոյլերի պաշտպան է: Եւ նրա սրտում զարկեց հերոսական փառասիրութեան երակը:

Նոյն օրը երեկոյեան նա պաշտօնակիցների հետ ունեցած

ընդհարումը պատմեց իւր մօտ ժողովւած ընկերներին Բոլորը միաձայն արտայայտեցին իրանց համակրութիւնը: Միայն իրաւաբան Վէքիլեանը նկատեց, թէ չը պիտի շատ էլ ոգևորուել, հարկաւոր է ամեն մի նոր միտք զգոյշ քարոզել:

— Զգոյշ, զգոյշ, — գոչեց Մսերեանը սրամտութեամբ, — դու էլ միշտ քո երգն ես երգում:

Ոչ ոք Դիմաքսեանին այնքան չէր համակրում, որքան այդ անուղղելի իդէալիստը: Գուցէ այդ էր պատճառը, որ Դիմաքսեանը ամենից աւելի նրա հետ էր մտերիմ և նրան էր սիրում ու յարգում: Նա խրախուսեց Դիմաքսեանին, առաջ բերելով նոր գաղափարների համար հերոսացած մարդկանց կեանքից օրինակներ:

Բարաթեանը ծիծաղեց նրա վրայ: Միթէ կարելի է հսկաների օրինակները ամեն մի շնչին բանի համար յիշել: Վարժես, մի երևելի բան է մի խումբ կիսակիրթ ուսուցիչների դէմ մտքառելը: Եւ, խօսակցութեան նիւթը փոխելով, առաջարկեց ընկերներին մի քիչ զարձանալ:

— Պարոններ, եղէք զործիչներ կամ կործանիչներ, ինչ կամենաք: Բայց մի՛ մոռանաք, որ մեր կեանքը անցողիկ է: Պէտք է դասնութիւնների հետ զարձութիւն էլ վայելել:

Այդ օրը Դիմաքսեանը ուժիկ էր ստացել: Նա պատուիրեց Սիրականին ընթրիք պատրաստել:

Շուտով ընկերական շրջանը նստեց սեղանի շուրջը բաց ախորժակով, պզտ, համարձակ, ինչպէս պարզ ուսանողներ: Նրանք սկսեցին այնպէս զարձանալ, խօսել ու վիճել, որ դրսից լսողը կը կարծէր, թէ սենեակը լիքն է հանդիսականներով: Գինին կրկնապատկել էր մի քանիսի ոգևորութիւնը:

Մսերեանը սկսեց մի հին ուսանողական երգ: Բժիշկ Սալամբեկեանը ընդհատեց նրան ժողովրդական մի մելոմազձիկ երգով: Իրաւաբան Վէքիլեանը շարունակ ժպտում էր, թէև աշխատում էր ցոյց տալ, թէ անկեղծ զարձանում է:

Բարաթեանը առանձին ուրախ տրամադրութեան մէջ էր: Նա սրախօսում էր սովորականից շատ և աւելի չաջող: Առհասարակ ընկերական խնձոյքներում նա յայտնի էր ինչպէս ամենազարթ սեղանակից: Ուտում էր նա անփոյթ կերպով և անընդհատ խօսելով,

բայց ուտում էր ամենից շատ և իւր հաստ շրթունքները այնպէս շարժելով, որ օւրիշների ախորժակին էլ նպաստում էր:

—Վէքիլեան, ես քո դիրքը չեմ հաւանում,—նկատեց Մսերեանը,—միշտ լուռ, միշտ զգոյշ, հեր օրհնած, մի անգամ չը տեսայ, որ դու ողևորես ընկերներիդ շրջանում:

—Ե՛հ, անցան ուսանողական օրերը, կեանքը մարդու վրայ ազդում է, միշտ չէ կարելի ուրախանալ:

Այս խօսքերը նա արտասանեց մի այնպիսի փիլիսոփայական եղանակով, որ, կարծես, վաղուց նա անցել էր կեանքի մշակող քուրան: Այդ էր, որ վրդովեցրեց Մսերեանին, որ առանց այն էլ մոլորում շատ էլ չէր համակրում իրաւարանին:

—Ասուած սիրես,—գոչեց նա,—ինձ մօտ կեանքի մասին մի՛ խօսիլ: Տեսնո՞ւմ ես զլիսիս մազերը, նրանք շատ օրեր են տեսել, ի՛նչ ես լրջամիտ ծերունի ձևանում:

Արդարև, Մսերեանը շատ օրեր էր տեսել, դառն օրեր: Տասը տարեկան հասակում նա զրկւել էր ծնողներից, մնացել էր թըշուառ, անօգնական: Մի բարեսիրտ մարդ նրան վերցրել էր իւր հովանաւորութեան տակ: Մեռել էր այդ բարեսիրտ մարդն էլ, և նա դարձեալ մնացել էր անպաշտպան Ռուսաստանում: Նա, ուսանող լինելով, շաբաթներով տաք կերակրի երես չէր տեսել, ապրել էր խոնաւ նկուղներում, ընկերացել էր ամեն տեսակ մութացկանների հետ: Երեք ձմեռ հիւսիսի կլիմայում անց էր կացրել առանց վերարկուի: Երկու տարի միայն նա կանոնաւոր կացարան և կերակուր էր ունեցել: Քափառել էր քաղաքից քաղաք ապրելախո ընկերների չար լեզուների պատճառով:

Այդ բոլորը յայտնի էր Վէքիլեանին, որ այժմ նրա առջ կենսական փիլիսոփայի քղամիդ էր հագնում: Այն Վէքիլեանին, որ ապրել և անել էր ապահով ծնողների զգւանքով և գուցէ չէր կարող հասկանալ, թէ ինչ ասել է չար աստղի տակ: Ծնւած լինել:

—Լսեցէք, ընկերներ, լսի՛ր, Վէքիլեան,—արտասանեց Մսերեանը չուզած ձայնով,—կեանքը միայն նրան է ճնշում, ով իւր ուսերը տխմարի պէս դէմ է տալիս նրա հարւածներին: Մաքառեցէք անպաղար և դուք միշտ կը ծիծաղէք նրա վրայ: Կեցցէ վիշաբ, որ մաքրում է մարդուն, ինչպէս կրակը ոսկուն...

Եւ նա, բաժակը բարձրացնելով, զարկեց Գիմաքսեանի բաժակին: Նրանց հայեացքները մէջ նշմարելի էր փոխադարձ անկեղծ ընկերական խորին համակրութիւնը: Իւր կրած հալածանքների և թշուառութիւնների շնորհով Մսերեանը զրաւել էր անխտիր բոլոր ընկերների համակրութիւնը:

Միայն Վէքիլեանն էր, որ մտքում հեպնութեամբ էր վերաբերում դէպի իդէալիստը: Նրա կարծիքով Մսերեանի կրած դառնութիւնները առաջացել էին իւր թուլութիւնից: Նա ոչինչ նշանակութիւն չէր տալիս նրա անցեալին, քանի որ այդ անցեալը ներկայի համար մի գործնական հետևանք չէ ունեցել: Ահ որ Մսերեանը՝ նոյնն է, ինչ-որ էր տասը տարի առաջ, միշտ ոգևորւող, միշտ պատանի: Նրա մտքերի մէջ չը կայ մի որոշ կապ, նա չունի մի ամուր աշխարհահայեացք, մի զուսժ պարզած գաղափար, որի առաջ նսեմանային միւս բոլոր գաղափարները, և նա կարողանար անձնատուր լինել մի որ և է նպատակի իրագործման: Նա զիտէ միայն խօսել, յափշտակել և ուրիշներին ոգևորել: Նրա դերը անորոշ է կեանքի մէջ: Ոչ, Վէքիլեանը—Մսերեան չէ, և չի էլ ուզում նրան նմանակել, երբէք:

Ընկերները ցրելուց յետոյ Գիմաքսեանը երկար ժամանակ չը կարողացաւ այդ գիշեր քնել: Նրա ջղերը զրգուած էին աղմկալի խօսակցութիւնից:

Մէջքի վրայ անկողնում պառկած, նա անորոշ հայեացքը ուղղել էր առաստաղին: Նրա միտքը զբաղւած էր ասպագայով: Ահա այն կեանքը, որին նա վաղուց փափագում էր, այն երկիրը, այն շրջանը, դէպի ուր ձգտում էր ուսանողական շրջանից: Վերջապէս, նա գտնուում է այն հողի վրայ, ուր պէտք է ցանէ տարիների ընթացքում ժողոված սերմերը: Օ՛, որքան յետ է քնացել նրա մայրենի ժողովուրդը այն ազգերից, որոնց հետ նա շփուել է վեց տարի շարունակ և որոնց քաղաքակրթութեան արգասիքները տեսել է աչքով: Ո՛րքան տարբերութիւն այնտեղի և այստեղի, այն կեանքի և այս կեանքի մէջ...

Այն բազմաթիւ գաղափարները, որ բարգւել էին նրա գըլխում, գործադրութեան ելք էին որոնում: Մի ներքին հոգեկան ոյժ վառում էր նրա սիրտը անզուսպ եռանդով: Թւում էր նրան,

Թէ կեանքը շատ կարճ է այդ բոլոր զաղափարների մի շնչին մասն անգամ իրազործելու համար: Տակաւին քսան ու վեց տարեկան նա զգում էր, թէ արդէն շատ ժամանակ է կորցրել ապարդիւն:

Միւս կողմից նախանձը զրգուում էր նրա սրտում, երբ չիշում էր այն անմահ մարդկանց, որ պատանեկական հասկում արդէն անուն էին վաստակել: Ահա հէնց այդ անմահների սոււերներն էին, որ մշում էին նրան դէպի առաջ, որ գիշեր-ցերէկ հալածում էին նրա միտքը և խոստանում նախանձելի ապագայ: Այն, նախանձելի, որովհետեւ նա չի մնալ անչաչուութեան մէջ, նա իւր կեանքը չի թաղիլ խաւարում: Նա բաց կանի իւր ոյժերով միտք ասպարէզ, ուր նրա անունը կը փայլի ինչպէս մենաւոր, պայծառ աստղ: Մարդիկ կը ճանաչեն նրան, կը լսեն նրա պատգամախօս ձայնը: Նա կ'առաջնորդի իւր հայրենակիցներին դէպի լոյս, արդարութիւն, ճշմարտութիւն: Ամբոխը, ողորմելի, եղկելի ասիական ամբոխը կը զգայ նրա ոյժը, կը սկսի հետեւել նրան, փառաբանել, երկրպագութիւն տալ նրա հանճարին, ծափահարել նրա ամեն մի քայլը:

Եւ կը վաստակի նա մարդկային մոքի և խելքի ղեկավարի զօրաւոր անունը, և՛ կ'անմահացնի նա այդ անունը, և՛ ապագայ սերունդները կը զրոշմեն նրան պատմութեան էջերում:

Ի՛նչ փոյթ, որ նա մի փոքրիկ, ցիր ու ցան եղած ազգի զաւակ է: Սուտ է, թէ միայն մեծ ազգերն են մեծ մարդիկ ծնում: Իսկ չորս հազար ամեայ զոչութիւնը, իսկ փառաւոր պատմական անցեալը, միթէ մի ազգի համար այդ ոչինչ նշանակութիւն չունէ: Ինչու ուրեմն չը չուսալ, որ հասել է այն օրը, երբ այդ փոքրիկ, աննշան ազգը փարթամ մարդկութեանը պէտք է տայ մի հանճար, որ տառապեալ, խաւարամիտ և դարաւոր մթութեան մէջ դեզերող ժողովրդի մէջ բե՛րբորմատորի անունը վաստակած լինի: Եւ այդ հանճարը պէտք է լինի ինքը—Արսէն Դիմաքսեանը:

Դրաւած այս մոքերով՝ Դիմաքսեանը անդիտակցաբար բարձրացել էր անկողնից և գիշերաչին շապկով քայլում էր սենեակում: Նրա փոքրիկ մարմնի սոււերը սահում էր պատերի վրայ, մերթ հասնելով առաստաղին, մերթ ընկնելով յատակի վրայ: Յանկարծ նրա հայեացքը հանդիպեց իւր սոււերին, և նա կանգ առաւ:

ու նայեց: նա զգաց մի ցնցում և ոտը ամուր խփեց շատակին: նա ինքն իրան թւաց այնքան փոքր, այնքան աննշան, այնքան ողորմելի, որ վրդովեց: Առաջին անգամը չէր, որ այդ միտքը զրգուում էր նրան գիշերային լռիկ մենութեան մէջ:

—Միթէ, միթէ այս փոքրիկ մարմնի մէջ այնքան զօրեղ հոգի կայ, որ մի ահողջ ժողովրդի գլուխ լինի, — գոչեց նա լսելի ձայնով: Սակայն նոյն վայրկեանին նա շփեց ձագաւորը, հեռացրեց իրանից յանկարծակի պաշարած կասկածը և նորից անձնատուր եղաւ իւր երևակալութիւններին:

## IV

Դիմաքսեանի ընկերներից Բարաթեանը և Վէքիլեանը բուն թիֆլիզցիներ էին, իսկ Սալամբէկեանը և Մսերեանը գաւառացիներ:

Սմենից շատ ծանօթներ և կապեր ունէր թիֆլիզում Վէքիլեանը, յետոյ Բարաթեանը: Միւսների համար տեղական հասարակութիւլը դեռ մի անծանօթ աշխարհ էր, մանաւանդ Մսերեանի, որ առ հասարակ խոյս էր տալիս բազմաթիւ ծանօթներից:

Այլ էր Բարաթեանը: Այդ զւարճասէր երիտասարդի համար հասարակութիւնը ունէր շատ հրապուրիչ պայմաններ, ինչպէս և ինքը շատերի համար ունէր նոյն պայմանները: Նրա ճարպիկ լեզան, շնորհալի ձևերը, սիրալիր ժպիտները, գեղեցիկ պարելը, վերջապէս, արտասահմանեան կրթութեան հռչակը, եւրոպական լեզուներ իմանալը բաց արեցին նրա համար շատ դռներ: Իսկ Վէքիլեանը ծանօթացրեց նրան բոլոր իւր ազգական ընտանիքների հետ, որոնց թիւը շատ էր:

Օր չէր լինում, որ նրանք միասին հիւր չը լինէին այս կամ այն ընտանիքում: Սմեն տեղ Բարաթեանին ընդունում էին հաճութեամբ, մանաւանդ որ նրա գերդաստանը քաղաքում բաւական չայսնի էր:

Պատահում էր, որ այս կամ այն տիկինը մի անգամ մի հանդիսում Բարաթեանին տեսնելով, դառնում էր Վէքիլեանին:

—Ծանօթացրէք ինձ ձեր ընկերոջ հետ, նա ինձ դիւր է գալիս: Իսկ երբ Բարաթեանը ծանօթանում էր, իսկոյն հիւր էր հրաւիրուում: Եւ ոչ մի հրաւեր չէր ձանձրացնում նրան: Ահա ինչու

չորս ամիս չը կար, որ նա վերադարձել էր արտասահմանից, և արդէն նրա ազգանունը պըտտում էր զանազան շրջաններում:

Այդ շրջաններից տակաւին հեռու էր Դիմաքսեանը: Նա, թէև Մսերեանի պէս չէր արհամարհում հասարակութեանը, սակայն զբաղւած լինելով իւր ներքին աշխարհով, իւր գազափարներով, վեճերով ու ծրագիրներով, առանձնապէս չէր էլ մտածում ծանօթութիւնների մասին: Բայց կային մարդիկ, որ իրանք էին ձգտում նրան մօտենալ: Նոյն խոյ մի քանի ընտանիքներ փափագ էին յայտնում նրան իրանց յարկի տակ տեսնել:

— Բերէք ձեր օրիգինալին մեզ մօտ, — ասաց մի օր մէկը Բարաթեանին:

Դա տիկին Բախտամեանն էր, Վէքիլեանի ազգականուհիներից մէկը: Տիկինը սիրում էր ծանօթութիւններ, առանձին հակումն ունէր դէպի այն երիտասարդները, որոնք իրանց ուսումով, հասարակական գործերով և անունով քիչ թէ շատ աչքի էին ընկնում: Նա նրանց հետ վիճաբանում էր, դատում էր և առհասարակ աշխատում էր ժամանակակից ինտելիգենտ կնոջ դեր կատարել:

Մի օր Բարաթեանը Դիմաքսեանին ներկայացրեց տիկնոջը, որ իւր սովորութեան համեմատ նրան հրաւիրեց իւր տունը: Իսկապէս Դիմաքսեանը առաջին անգամից լաւ սպաւորութիւն չէր գործել տիկնոջ վրայ իւր աննշան տեքով: Բայց որովհետև նրա անունը երիտասարդութեան մէջ բաւական հռչակ էր ստացել, ուստի ինտելիգենտ կինը կամեցաւ այդ մէկին էլ անպատճառ իւր տանը տեսնել:

Առաջին պաշտօնական այցելութիւնից յետոյ, Դիմաքսեանը նորից հրաւիրեց Բախտամեանների մօտ: Եւ մի երեկոյ նա, զիջանելով Բարաթեանի թախանձանքին, զնաց այնտեղ իբրև արդէն ընտանեկան ծանօթ:

Տիկնոջ ամուսինը — Պետր Սոլումոնիչ Բախտամեանը — նոր էր տնից դուրս եկել գործով և յետոյ պէտք է գնար քաղաքային դումայի նիստը: Ինքնավարութեան առաջին օրից նա առաջին կարգի իրաւասու էր, և երբէք մի նիստ բաց չէր թողել:

Սենեակի խորքում խաղում էին երկու մանկահասակ աղջիկներ չորս և վեց տարեկան: — Տիկնոջ զաւակներն էին: Թէյի սեղանի

շուրջը նրա հետ նստած էին մի դեռահաս աղջիկ գիմնազիօնի համազգեստով և մի չափահաս օրիորդ: — Պետք է Սոլովյովի հանգուցեալ քրոջ զաւակներն էին, որ ապրում էին նրա տանը:

Տնային բաց գոյնի հագուստով, մազերը խնամքով սանրած, սպիտակ թևերը կիսով չափ բաց տիկիներ իւր տարիքից աւելի երիտասարդ էր երևում, թէև առանց այդ էլ նրա տարիքը քսան ու եօթից չէին անցնում: Նա քաղաքում շատերի համար զեղեցկուհի էր իւր սև աչքունքով, դէմքի թարմ դոնով, կարմրախայտ լիք-լիք այտերով և բաւական ուռած կրծքով:

Նա հիւրերին ընդունեց նազելի շարժւածքով տեղից բարձրանալով և քաղցր ժպտալով Բարաթեանի երեսին:

Գիմնաքսեանը, որ սովորաբար ամօթխած էր, շփոթւեց տիկնոջ ձեռքը սեղմելիս: Գիմնազիօնի աշակերտուհին, յայտնի չէր ինչու, ծիծաղեց և վազեց միւս սենեակ:

Գայիանէն — այսպէս էր մեծ օրիորդի անունը — համեստ, հանդարտ կերպով մեկնեց Գիմնաքսեանին իւր ձեռքը: Գա մօտ քսանուերկու տարեկան, բաց գոյնի մազերով, փոքր ինչ թուլս դէմքով, սև յոնքերով և կապոյտ աչքերով մի արարած էր, որի դէմքի համեստութիւնը տիկնոջ աչք ծակող զեղեցկութեան հակառակ էր ներկայացնում: Հասկով նա տիկնոջ չափ էր, բայց աւելի բարակ և նուրբ կազմւածքով: Նրա սրածայր և երկարածև քիթը բնաւ չէր խանգարում նրա դէմքի դժերի կանոնաւորութեանը, թէև նրա երեսը ցոյց էր տալիս մի փոքր երկարածև: Նա հազած էր պարզ տնային հաշարակ մեխակադոյն հագուստ:

— Երևակայեցէք, — սկսեց խօսել տիկին Բախտամեանը, սովորական ողջոյններից յետոյ թէչի բաժակը դնելով Գիմնաքսեանի առաջ, — իսկոյն ես ու Գայիանէն մի շատ ժամանակակից հարցի մասին էինք վիճում, որ դուք եկաք: Ասացէք, խնդրեմ, միթէ կինը մեզանում կարող է այն դերը կատարել, ինչ-որ լուսաւորւած ազգերի մէջ: Ես այս մասին պարոն Բարաթեանի հետ էլ խօսել եմ: Նա ասում է, թէ դուք, պարոն Գիմնաքսեան, մեր իրաւունքները տաք-տաք պաշտպանում էք, շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ: Բայց ինչ օգուտ կ'իկնը միթէ մեզանում կարող է բերան բաց անել իւր իրաւունքների համար, Лизочка, не шали, ոչ, ոչ, է կա-

բող, մենք Ասիայումն ենք ապրում, հասկանում էք, Ասիայումն Այնպէս չէ, պարոն Բարաթեան:

Ի հարկէ, այդպէս է: Միթէ ջենտլմեն Բարաթեանը կարող է հակառակել ժամանակակից տիկնոջ ասածներին:

— Միայն,— աւելացրեց երիտասարդը բարեկամական եղանակով,— պէտք է քաջ լինել, ուշադրութիւն չը դարձնել ուրիշներէ վրայ և ապրել ինչպէս եւրոպացի, տիկին, ինչպէս եւրոպացի:

— Ի հարկէ, ի հարկէ, պարոն Բարաթեան, ես էլ այդ եմ ասում: Ասում են, տիկին Բախտամեանը ազատամիտ կնիկ է, միթէ ես չը գիտեմ, որ շատերը նախանձից են խօսում: Եթէ ես ուրիշներէ պէս միշտ զուգւելով, զարպարւելով, հանդէսներ զնալով անցկացնէի ամբողջ կեանքս, չէին խօսիլ, հաւատացէք, չէին խօսիլ: Ախտոս, որ մենք աղամարդկանց մէջ էլ քիչ բարեկամներ ունենք: Ինչ ուզում էք ասէք, տասից իննը վատ աչքով են մտիկ անում լուսաւորւած կնոջ վրայ: Պարոն Դիմաքսեան, մի բաժակ էլ, էէ լանւ, խմեցէք, ես ցերեմոնիա չեմ սիրում, Лизочка тише, Елочка, что ты орешь? Տեսնում էք, որ լուրջ բաների մասին ենք խօսում, խելօք նստեցէք ու ականջ դրէք:

Մանկահասակ աղջիկները, որ մի օրինաւոր կոնցերտ էին սկսել, աւելի բարձր գոռացին և միմեանց մի երկու բռունցք տալով, բաժանւեցին:

— Բաւական չար են, պարոն Դիմաքսեան, բայց մեղաւորը ես եմ, շատ եմ ազատութիւն տալիս: Ես նրանց կրթում եմ նոր եղանակով:

Խօսակցութիւնը տեղի ունէր ռուսերէն: Տիկինը, որ ազատ սիրում էր այդ լեզուն, ոչ ոքի ժամանակ չէր տալիս բերան բաց անելու: Նա շարունակեց նոյն եղանակով, անցնելով մի առարկայից միւսը, կանանց իրաւունքներից— թատրոն, թատրոնից— ճանապարհորդութիւն: Մի քանի անգամ ակնարկեց, թէ եղել է արտասահմանում ամուսնու հետ, աչքով տեսել է, թէ որքան այնտեղ կանայք ազատ են:

— Ես հանդիպեցի մի վենզրուհու, որի ամուսինը Խալիպուլումն էր ճանապարհորդում, իսկ ինքը զնում էր Շւէյցարիա: Ախ, պարոն Բարաթեան,— զոչեց տիկինը, յանկարծ խօսքը փոխելով,— դուք

պարոն Դիմաքսեանին յայտնել էք մեր ժողովի մասին: Չէք յայտնել, այ այ այ, ի՞նչպէս կարելի է:

Նա պատմեց, թէ մի խումբ կանայք վճռել են կանանց բարեգործական ընկերութիւն կազմել և թէ վաղուց է ինքը այս միտքը քարոզում էր և, վերջապէս, յաջողեցրեց:

—Գայիանէն էլ էր աշխատում,— աւելացրեց նա վեհանձնաբար,— կարելի է ասել, որ ինիցիատորները հէնց մենք ենք, այնպէս չէ, Գայիանէ:

Օրիորդը համեստութեամբ պատասխանեց, թէ ինքը իրան ինիցիատոր չէ համարում: Տիկինը հակառակեց, և վերջը պարզեց, որ ընկերութիւն հիմնելու միտքը առաջին անգամ յայտնել է Բարաթեանը: Այս նորութիւնը Դիմաքսեանի սրտում զարթեցրեց մի տեսակ անսխորժ զգացում: Ի՞նչպէս, նա, որ այնքան պաշտպանել է և պաշտպանում է կանանց խնդիրը, յանկարծ հեռու է մի գործից, որ կանանց ինքնուրոյնութեան առաջին քայլն է որոշում: Ահա ինչ ասել է հասարակութիւնից հեռու ապրել:

Նրա յուզմունքը աւելի սաստկացաւ, երբ տիկինը ասաց, թէ ապագայ ընկերութեան կանոնադրութիւնը կազմող մասնաժողովի անդամ է ընտրւած և՛ Բարաթեանը: Նա յայտնեց իւր ուրախութիւնը, որ հայ կնոջ մէջ, վերջապէս, ինքնաձանաչութեան հոգի է զարթնում: Բայց, չը կարողանալով զսպել իրան, աւելացրեց, թէ չէ հաւանում, որ կանայք իրանց առաջին հասարակական գործի մէջ տղամարդկանց էլ խառնում են: Աւելի լաւ է բոլորովին անկախ գործել: Պէտք է հէնց սկզբից սովորել ինքնուրոյն գործունէութեան: Տղամարդի մասնակցութիւնը կարող է նրանց վրայ ծնշում գործել:

Այս բոլորը նա ասաց հանդարտ եղանակով: Բայց նրա ձայնի մէջ այնու ամենայնիւ զգացւում էր ներքին խռովութիւն: Տիկինը հակառակեց նրան: Ոչ, ոչ, կանայք մենակ գործել չեն կարող, տղամարդը միշտ պէտք է օգնի նրանց:

Դիմաքսեանը ակամայ շփոթեց և մտքում բարկացաւ ինքն իւր վրայ: Պարզ էր, որ Բարաթեանը այսպէս թէ այնպէս վայելում է կանանց համակրութիւնը: Ուրեմն անվայել է խախտել այդ համակրութիւնը և անկարելի:

Խօսակցութեան նիւթը փոխեց: Օրիորդ Գայիանէն սեղանի վրայ դրեց մի քանի տեսակ քաղցրաւենիներ, չոր սրուղներ, դինի և մի շիշ քաղցր ըմպելիք:

Այժմ Դիմաքսեանը աշխատում էր լինել զւարթ, անփոյթ, համարձակ, ինչպէս Բարաթեանը, որ, կարծես, իւր տանը լինէր նստած—ազատ, անշփոթ: Բայց չէր յաջողուում: Նա զգում էր, ինքն էլ չը զիտէր ինչու, որ կաշկանդաւած դրութեան մէջ է: Ստէպ ստէպ նայում էր օրիորդին, խօսքը միայն նրան էր ուղղում, աշխատում էր լուրջ խօսակցութիւնից չը հեռանալ:

Գայիանէն լսում էր նրան չարզանքով, լսում էր նրա ոգևորւած խօսքերը նոր սերնդի կրթութեան, հասարակական կեանքի այս կամ այն փոփոխութեան, հայրենիքի վիճակի մասին: Այդ միջոցին Դիմաքսեանը մոռանում էր հասարակ հիւրի դերը և երևան էր գալիս ինչպէս մի երգչուհի քարոզիչ:

Բայց բաւական էր Բարաթեանի մի աշխարհիկ դարձւածը, մի սուր նկատողութիւնը, մի թեթեւ, անփոյթ հեգնութիւնը, և սենեակի մէջ տարածւում էր օրիորդի ու աիկնոջ անկեղծ և զւարթ ծիծաղը: Միծաղում էր և՛ Ուսաննան, որ միւս սենեակից վերադարձել էր:

Դիմաքսեանը ուզում էր մասնակցել այդ ընդհանուր զւարճութեանը: Սակայն նրա ծիծաղը հնչում էր կեղծ, կատակը արտայայտում էր բանազրօսիկ: Քլում էր նրան, որ օրիորդը մտքում ծաղրում է իրան, համարում է տաղակալի փիլիսոփայ, տղեղ, այլանկալ, զգուշի: Այն ինչ Գայիանէն ոչ մի կերպ, ոչ մի ձևով, բացի յարգանքից և ջերմ համակրութիւնից, ոչինչ ցոյց չէր տալիս նրան:

—Ուր էք շտապում, — ասաց աիկինը, տեսնելով, որ Դիմաքսեանը ոտքի կանգնեց, — սպասեցէք, ամուսինս կը գայ, միասին կ'ընթրենք:

Դիմաքսեանը չը համաձայնեց: Նա հրաժեշտ տւեց: Նրա ետեից դուրս եկաւ Բարաթեանը: Նրանք լուռ էին, ամեն մէկը զրազւած իւր մտքերով:

—Ինչո՞ւ կանգնեցիր, — զոչեց Բարաթեանը, տեսնելով, որ ընկերը փողոցի մայթի վրայ յետ մնաց:

— Յրոտեսութիւն, ես կառքով եմ գնում:

Նա թոյլ կերպով սեղմեց ընկերոջ ձեռը և բարձրացաւ առաջին պատահած կառքի վրայ: Բարաթեանը նայեց նրա ետեւից զարմացած և ինքն իրան ասաց.

— Ի՞նչ պատահեց այդ մարդուն:

## V

Գլխաքսեանը սաստիկ շարացած էր: Նրա փոքրիկ մարմինը անընդհատ շարժուում էր կառքի մէջ: Մերթ նա շփում էր կարճ լիկ ու նօսր միրուքը, մերթ ձեռը ցնցողաբար զարկում էր ծնկին:

Տուն հասնելով, նա զղջաց իւր այցելութեան մասին: Տիկին Բախտամեանը նրան դուր չէր եկել իւր շատախօսութիւնով և արւեստական ձևերով: Այդ կողմից նա արդար էր համարում իւր այն տեսութիւնը, թէ ետքան կինը գեղեցիկ է, այնքան թեթեամիտ է:

Բայց միև կողմից՝ չէ որ օրիորդ Քայիանէն էլ տգեղ չէր: Ինչ՞ու ուրեմն նա դիւրեկան է, այնչափ դիւրեկան, որ ազդու տպաւորութիւն է գործել Գլխաքսեանի վրայ: Ահա նրա ազատ ծիծաղը, գրաւիչ ժպիտները, կապտագոյն աչքերի մեղմ և սիրտ թափանցող փայլը: Ինչ՞ու իւր սիրունութիւնով հանդերձ նա անտանելի է: Ո՛չ, անկարելի է չը յարգել մի այդպիսի արարածի: Եւ մի՞թէ սիրուն աչքերը, նուրբ բերանը, գեղեցիկ ատամները կարող են արգելք լինել խելքի բարձրութեանը, կամքի հաստատութեանը, սրտի վսեմութեանը:

Այստեղ Գլխաքսեանի հայեացքը դարձեալ ընկաւ իւր սուերի վրայ: Նոյն վայրկեանին նա չիշեց Բարաթեանին: Նա մտքով ինքն իրան համեմատեց իւր ընկերոջ հետ: Քառորդ ժամ առաջ լուսաւոր խանութների առջևով նրանք անցնում էին կից առ կից: Ամբողջ ուսերով Բարաթեանը բարձր էր նրանից: Այդ սարսափելի տարբերութիւնն էր, որ մի վայրկեանում տակն ու վրայ արեց նրա սիրտը, և նա շպապեց հեռանալ ընկերից, կառք նստել:

Նա մտաբերեց Քայիանէի շարաբերութիւնը Բարաթեանի հետ, նրանց բոլոր ձևերը, խօսելու եղանակը, ամեն ինչ մանրամասնօրէն: Եւ զգաց, որ նրանց մէջ կայ մի ինչ որ լուռ փոխադարձ համակրութիւն: Նրա մէջ զարթնեց մի անբացատրելի ստելու-

Թիւն դէպի երկունն էլ, մանաւանդ դէպի Բարաթեանը: Ինչու նա զւարճանում էր, սրախօսում էր ազատ ու համարձակ շարժում՝ ինչպէս սեպհական տանը: Իսկ ինչքը... կարծես, մի աներևոյթ չար ձեռք կաշկանդել էր նրան ոտից մինչև գլուխ: Ինչու, միթէ այն պատճառով, որ նա փոքրիկ է, աննշան, տղմղ:

Նա սկսեց անց ու դարձ անել: Ներս մտաւ Սիրականը, որ նրա կօշիկները տանի սրբելու:

Դիմաքսեանը մի զննող հայեացք ձգեց նրա վրայ: Նրա կատաղութիւնը մեղմացաւ, և նա աւելի խորը նայեց ծառայի ծուռ ու մուռ հասակին: Կարծես, հաճելի էր նրա համար դիտել այդ տղեղ մարդուն, որ լուռ կանգնած էր նրա առաջ իւր աղաւաղած բերանը կիսով չափ բաց, շիւ աչքերով և տափակ քթով:

—Ճշմարիտ է:

—Ի՞նչը, աղա:

Դիմաքսեանը երեսը յետ դարձրեց: Նա խօսում էր մտքում: Ծառան զարմացած կանգնած էր: Նա հրամանի էր սպասում: Իսկ հրաման չը կար:

Դիմաքսեանը նստեց և դարձեալ նայեց ծառային: Մի քանի վայրկեան անցած, նա կամացուկ վերկացաւ տեղից և սկսեց անց ու դարձ անել, աշխատելով, որքան հնար է, խոշոր քայլեր անել: Կարծես, նա մի խորին դրամատիքական դեր էր փորձում, որ պէտք է կատարէր:

Ստէպ ստէպ նա աչքի տակով սուր դիտում էր ծառային: Իսկ ծառան կանգնած էր, կոշտ ու սեւացած ձեռները փորի վրայ դրած:

Դիմաքսեանը անցնում էր նրա մօտով: Եւ նկատելի էր, որ ամեն անգամ անցնելիս աւելի ու աւելի մօտենում է ծառային, ինչպէս մի խորամանկ կատու իւր որսին:

Գիշերայ լուսթեան մէջ, կանթեղի աղօտ լուսով, այդ երկու տարօրինակ կերպարանքների հարևանութիւնը մի խորհրդաւոր տեսարան էր ներկայացնում: Մէկը անշարժ կանգնած էր սենեակի մէջ տեղում, միւսը պտտում էր նրա շուրջը:

Սրբեմն Դիմաքսեանը այնքան մօտենում էր Սիրականին, որ քիչ էր մնում նրանց ուսերը միմեանց զարկէին:

Այժմ ծառան մարմնացած ապշութիւն էր ներկայացնում: Նրա հայեացքը հետեւում էր Դիմաքսեանին: Կարծես, մի մազնի-սական, ոչժ բեւեռել էր նրա ոտները յատակին: Նա ոչ խօսում էր, ոչ շարժում է ոչ էլ, կարծես, ուզում էր շունչ քաշել: Միայն նրա թուամազ երեսը պըտտում էր աջ ու ձախ, ինչպէս ծխնելուզի թիթեղեայ հողմավար:

Յանկարծ Դիմաքսեանը մի վայրկենաւափ կանգ առաւ ծառայի կողքին: Նա ուսը մօտեցրեց Սիրականի ուսին, նայեց նրա աչքերին, ճակատին, կրծքին: Յետոյ մի ճարպիկ շարժւածքով հեռացաւ նրանից մի քանի քայլ և թոյլ ձայնով արտասանեց.

— Ի՞նչ կարճ ես Սիրական:

Եւ բարձրաձայն ծիծաղեց: Դա մի անսովոր ծիծաղ էր, մի ծիծաղ, որի մէջ չէր զգացւում ոչ ծաղր, ոչ դառնութիւն և ոչ զւարճութիւն, այլ մի տեսակ բարկութիւն:

Դարձեալ խորին տրամուլթեան քօղը ծածկեց նրա երեսը: Նա թուլացած նստեց անկողնակալի վրայ, գլուխը թեքեց կրծքին և նշան արեց ծառային, որ դուրս գնայ: Յետոյ նա նստեց պարասու-ւելու: Սեղանի վրայ ցրած էին զանազան զրքեր, լրագիրներ, ամսագիրներ, ձեռագիրներ, թղթի բաղմաթիւ մանր յտորներ, որոնց վրայ զրւած էին թւանշաններ:

Այս բոլորը նա պատրաստել էր մի ընդարձակ հասարակական դասախօսութեան համար, որ պէտք է կարդար մի ամսից յետոյ: Ընկերներին յայտնի չէր նրա այս մտադրութիւնը, ինքն էլ առաջժամ զաղանի էր պահում: Քաւորդ ժամ անցած պարասումունքը նորից նրան մոռացնել տւեց ամեն ինչ, և նա եւանդով և ոգևորւած գրում էր:

Նոյն պահին Բարաթեանը իւր սենեակում զբաղւած էր այլ մտքերով: Բաժանելով Դիմաքսեանից, նա ոչ մի տեղ չ'ուղեց գնալ, վերադարձաւ տուն: Նա մտքում անիծում էր ընկերոջը, որ այնպէս շուտ դուրս եկաւ Բախտամեանների տնից:

Նա վաղուց համակրում էր օրիորդ Գայիանէին: Քատրոնում և հասարակական այլ և այլ տեղերում ամենից աւելի այդ օրիորդն էր, որ զբաւում էր նրան և որին միշտ հետամուտ էր լինում: Ուստի շատերը կարծում էին, թէ նրանք արդէն հարմնացու և փեսա-

ցու են: Այն ինչ Բարաթեանը դեռ շատ զգոյշ էր վարուում, որպէս զի այս կարծիքը հաստատ հիմք ունենար: Սկզբունքով նա վճռել էր ամուսնանալ, բայց ոչ շատ էլ շուտ: Ե՛հ, ոչ այն պատճառով, որ քսան ու վեց տարեկան հասակը ամուսնական կեանքի համար բաւարար չէր համարում, այլ որովհետեւ նրա հասարակական դիրքը դեռ որոշ չէր: Կրակից ապահովող ընկերութեան գործակալի պաշտօնը նրա աչքում մի չնչին բան էր: Նա փափագում էր աւելի առաջ գնալ: Բայց թէ ի՞նչպէս—այս էր գլխաւոր հարցը: Արքունական ծառայութեան մէջ մտնել նա չէր ուզած: Նա բժիշկ չէր, ինժեներ չէր, իրաւաբան չէր, որ իւր որոշ շաւիղը ունենար: Եւրոպական համալսարանի դիպլոմը շատ շատ կարող էր նրա համար մի որ և է հայ դպրոցի տեսչի կամ ուսուցչի պաշտօն պատրաստել: Բայց նրա քիմքը շատ և շատ բարձր էր այս տեսակ համեստ պաշտօններից: Այլ բան էր եթէ նա կարողանար մի հասարակական պաշտօն ստանալ մի որ և է հիմնարկութեան մէջ, թէ կուզ քաղաքային վարչութենում, թէ կուզ մի բանկում կամ մի ուրիշ տեղ:

Բայց հասարակական ընտրելին լինելու համար պէտք էին մեծ կապեր: Եւ ահա այդ կապերից մէկը և ամենազլխաւորը, ամենազօրաւորը կարող էր լինել Պետր Սոլումոնի: Բախտամեանը: Ո՞ր չէր ծանաչում քաղաքի այդ առաջնակարգ կալւածատիրոջ, Ո՞ր վաճառականը, որ բանկիրը, որ պաշտօնեան չէր կտտարիլ այդ պատկաւելի մարդու խնդիրը:

Ուրեմն պէտք էր գրաւել այդ զօրաւոր մարդու համակրութիւնը: Իսկ Բարաթեանը ոչ միայն դեռ չէր գրաւել, այլ և զգում էր, որ իւր չսածախ այցելութիւնները նրան դիւր չեն զալիս: Պատճառը նա շատ լաւ գիտէր: Պետր Սոլումոնիչը վերին աստիճանի նախանձոտ ամուսին էր: Եւ Բարաթեանը այդ կողմից նրան մեղադրելու իրաւունք չուներ: Քսան ու եօթ տարեկան զեղեցիկ և երիտասարդ կնոջ յիսուն և ութ տարեկան մարդը չէր կարող իւր տանը սառնասիրտ ընդունել երիտասարդ հիւրեր: Մանաւանդ, որ տիկին Բախտամեանը, Պետր Սոլումոնիչի կարծիքով, չափից աւելի էր ազատ վարուում երիտասարդների հետ: Իսկ Բարաթեանը ամենից կրթւածնէր, ամենից խելզքը, ամենից սրախօսը և, որ գլխա-

ւորն է; ամենից գեղեցիկը, որի հրապուրին զիւրին չէր զիմանալ:  
Մի բան կարող էր նրա համար տեղ բաց անել Պետր Սոլումոնիչի սրտում—Պայիանէի հետ ամուսնանալը: Նա գիտէր, որ պատկաւելի քաղաքացին այդ ամուսնութեանը դէմ չէր լինի. միթէ Պայիանէի համար նրանից աւելի յաջող կենայից կարող էր գտնել:  
Ահա ինչու Բարաթեանը զիշերւայ կիսին առանձնացած իւր սենեակում մտածում էր. ինչ անել, առջ զիրք հաստատել, յետոյ ամուսնանալ, թէ ա՛մուսնանալ զիրք հաստատելու համար:

Կար և մի ուրիշ կէտ, որ զբաղեցնում էր նրա միտքը կէս զիշերին: Եւ որքան նա աշխատում էր չը խորհել, դարձեալ այդ միտքը յամառութեամբ հալածում էր երիտասարդին: Ժամանակ առ ժամանակ նրա աչքերի մէջ պսպղում էր մի կրքոտ փայլ: Նա իւր հաստիկ շրթունքները սեղմում էր սպիտակ խոշոր առամներով, նրա առոյգ այտերը դողում էին և նրա դէմքի վրայ տարածում էր մի ժպիտ, որ յագուրդ չ'ըստացած հեշտասիրութիւն էր արտայայտում:

—Ո՛չ, այդ չը պիտի անել, չը պիտի անել, գոնէ... Վէքիլեանի համար, — արտասանեցին նրա շրթունքները:

Նա նայեց աջ ու ձախ, կարծես, վախնում էր, որ մի գուցէ մէկը լսէ այդ խորհրդաւոր խօսքերը:

Հետեւեալ օրը նա բաց թողեց, երրորդ օրը ցերեկով դարձեալ գնաց Բախտամեանների մօտ: Բարեբաղդաբար, այս անգամ էլ Պետր Սոլումոնիչը տանը չէր: Տիկինը նրան ընդունեց սովորական ուրախութեամբ և անմիջապէս խօսք բաց արեց Վիմաքսեանի մասին: Նա բոլորովին չէր հաւանել Բարաթեանի ընկերոջը:

—Պէմքի համար չ'ւմ ասում, Տէրը նրա հետ, վարմունքը շատ վատ է:

Այն, Վիմաքսեանը աաղտկալի է. նա ընկերական շրջանի մարդ չէ: Շարունակ վիճում է և հակառակում: Տղամարդը պէտք է յարգանքով վերարբերի կանանց բոլոր ասածներին:

—Ինչ'ու. բոլոր ասածներին, — ընդհատեց օրիորդ Պայիանէն, — միթէ այդ պարտաւորակմն է:

—Պարտաւորական չէ, սիրելիս, բայց քաղաքավարութիւնը պահանջում է:

—Քաղաքավարութիւնը պահանջում է միշտ կանանց շողոքորթել: Ընդհակառակը, իմ կարծիքով, տղամարդը միշտ պարտաւոր է ուղղել մեր սխալը, այսինքն մեզ հետ անկեղծ լինել:

Երկու կանանց մտքերը հաշտեցնելու համար Բարաթեանը մեզմէ և համոզիչ ձայնով նկատեց.

—Այն, օրիորդ, ձեր ասածը բոլորովին ճշմարիտ է: Բայց տիկինը դրա դէմ չէ: Տիկինը բարեհաճում է ասել, թէ տղամարդը կարող է կնոջ սխալը ուղղել, մինչև անգամ սովորցնել նրան, բայց հասարակ կերպով և ոչ թէ վարժապետական ձևով խրատել: Խրատելը առհասարակ, բլբլ, առհասարակ վայելուչ բան չէ:

—Ախ, պարոն Բարաթեան, — գոչեց տիկինը հիացած, — ինչ լաւ գուշակում էք իմ միտքը, երանի ամեն մարդ ձեզպէս շուտ հասկանայ մարդուն: Բայց զիտէք, ձեր Դիմաքսեանը շատ պակասութիւններ ունի, ես կարծում եմ, որ այդ փոքրիկ մարդու մէջ մի շատ գոռոզ սիրտ է նստած: Նա պէտք է շատ նախանձոտ լինի: Գայիանէ, խնդրեմ չը հակառակես, ես մարդկանց քեզնից շատ և շատ լաւ եմ ծանաչում, իզուր չեմ երկու-երեք տարով քեզանից մեծ: Այո, պարոն Բարաթեան, կարող եմ ասել ձեր ընկերը դժբաղդ մարդ է:

—Ինչով է դժբաղդ:

—Իբրև թէ չը գիտէք, չէք տեսնում նրա կերպարանքը, Ֆի...

Բարաթեանը վեհանձնաբար նկատեց, թէ տղամարդի համար արտաքինը ոչինչ նշանակութիւն չունէ: Նրա գեղեցկութիւնը խելքն է և սիրտը: Օրիորդ Գայիանէին շատ դուր եկաւ այս նկատողութիւնը: Նա զաղտուկ դիտեց Բարաթեանին և մտքում ասաց.

«Դու համ գեղեցիկ ես, համ էլ խելօք»:

Նոյն օրը երեկոյեան Դիմաքսեանի մօտ դարձեալ ընկերական ժողով էր: Բարաթեանը, որ ամենից առաջ էր եկել, խօսք բաց արեց նրա հետ Բախտամեանների մասին և հաղորդեց, թէ Դիմաքսեանը օրիորդի և տիկնոջ վրայ շատ լաւ տպաւորութիւն է գործել: Դիտաւորութեամբ ասած այս սուտը զրաւեց Դիմաքսեանին, և նոյն վայրկեանին նրա սրտում չքացաւ այն թեթեւ ատելութիւնը, որ դեռ մնում էր այնտեղ Բարաթեանի վերաբերմամբ:

## VI

Դիմաքսեանը զբաղած էր իւր դասախօսութիւնով: Նա մոռացել էր ուսումնարանական հոգսերը, ուսուցչական նիստերը, նոյն իսկ ընկերական ժողովները: Երբ փաստերը կազմակերպեց, բանախօսութեան գաղափարը ծրագրեց, մի օր յայտնեց ընկերներին իւր մտադրութիւնը:

—Ի՞նչ է դասախօսութեանդ բովանդակութիւնը, — հարցրեց Բարաթեանը:

—Մեր երկրի արդիւնաբերական-տնտեսական դրութիւնը:

—Հիանալի միտք, — գոչեց ամենից շուտ ոգևորուող Մսերեանը:

Նոյն հաւանութիւնը տւեց և՛ բժիշկ Սալամբէկեանը, Իսկ Վէքիլեանը զգուշացրեց Դիմաքսեանին, որ ծայրայեղ մոքերից խոյս տայ, աւհասարակ խոհեմութիւնով խօսի:

—Այդ բանումն էլ խոհեմութեանդ քիթը ներս խրեցիր, — ձայն տւեց բարկացած Մսերեանը, — Վէքիլեան, պառաւ հաւի մնի պէս օրից օր անմարսելի ես դառնում:

Բարաթեանը հարցրեց, թէ ինչ նպատակի է յատկացնելու դասախօսութիւնից գոյացած գումարը:

—Ազգային հիւանդանոց է բանալու, ինձ էլ կառավարիչ է նշանակելու, — հեզնեց Սալամբէկեանը:

Երբ Դիմաքսեանը ասաց, թէ արդիւնքը վճուել է նւիրել կանանց նոր կազմուող ընկերութեանը, Բարաթեանը յօնքիրը վերքաշելով արտասանեց.

—Միթէ՛, Ուրեմն, ես կ'ուրախացնեմ տիկին Բախտամեանին և օրիորդ Գայիանէին:

Բայց Դիմաքսեանը ասաց, թէ ինքը մտադիր է այցելել Բախտամեաններին և անձամբ յայտնել իւր վճիռը: Նրա յարալերութեան մէջ զգացւում էր մի տեսակ բարկութիւն դէպի Բարաթեանը: Նրա ձայնը նշմարելի կերպով դողում էր:

Երեկոյեան նա սովորականից աւելի խնամքով հագնեց և գնաց Բախտամեանների տունը: Այս անգամ Պետր Սողոմոնիչը տանն էր: Չընայելով իւր պատկառելի տարիքին, նա տակաւին առոյգ և առողջ մարդ էր, աւելի դէր, քան նիհար, աւելի ցածր քան բարձր հասակով: Նրա կողորիկ ու ուռած երեսը, որ երկու օրը մի անգամ

սպիրուում էր, արտայայտում էր սպահով ու անհոգ բուրժուայի որամնադրութիւնն: Իսկ ալիսառն յօնքերի տակ տեղաւորած աչքերի մէջ սպրելու և երկար սպրելու ցանկութիւն էր փայլում:

Դիմաքսեանը նրա հետ ծանօթացել էր արդէն առաջին պաշտօնական այցելութեան միջոցին: Պետր Սոլումոնիչը հաւանել էր նրան և խնդրել էր շուտ շուտ այցելել: Դա մի շնորհ էր, որին նա քիչ երիտասարդների էր արժանացնում:

Տիկին Բախտամեանը անզգուշութիւն ունեցաւ հարցնել Բարաթեանի մասին: Դիմաքսեանը պատասխանեց, թէ նա երևի զբաղւած է, որ չեկաւ, որովհետև խօսք էր տւել միասին այցելել:

— Զբաղւած, — գոչեց Պետր Սոլումոնիչը կիսահեղինաբար, — Բարաթեանը զբաղւած, այդ առաջին անգամն եմ լսում:

Նրա հեղուութեան մէջ երևում էր մի տեսակ ատելութիւն դէպի երիտասարդը: Մի ատելութիւն, որ նա չէր էլ աշխատում թագցնել: Սրիորդ Գալիանէն միւս սենեակից ներս եկաւ: Նրա աչքունքը կիտւեցին, երբ տեսաւ, որ Դիմաքսեանը մենակ է կելլ, երևում էր, որ նա էլ սպասում էր Բարաթեանին, ինչպէս տիկինը:

Պետր Սոլումոնիչը շարունակեց խօսել Բարաթեանի մասին:

— Հայր ու որդի մի խնձոր են երկու կտոր արած: Ես նրա հօր հետ միասին եմ ուսում առել գիճնագիտյում Վորոնցովի ժամանակ: Առհասարակ Բարաթեանները յայտնի պտուղներ են...

Դիմաքսեանը խօսակցութեան նիւթը փոխեց: Նա հետաքրքրւեց քաղաքային դործերով: Սաանդուն իրաւասուն, կարծես, հէնց մի այդպիսի բանի էր սպասում, որ ցոյց տայ, թէ ինքը որքան ազատամիտ քաղաքացի է: Նա պաշտպանեց ջրանցքի խնդիրը: Նա խօսեց ձիաքարշ երկաթուղու օգուանների մասին, ծաղրեց մի քանի իրաւասու հռետորների, զովարանեց քաղաքագլխին: Առհասարակ յայտնեց, որ նրա ուղեղը անչափ զբաղւած է քաղաքային դործերով: Մի հանգամանք, որ սաստիկ բարկացնում էր նրա կնոջը, որովհետև Պետր Սոլումոնիչը միշտ ձանձրացնում էր նրան այն բանով, որ կնոջը բնաւ չէր հետաքրքրում — զուամպի պէսպէս վճիռներով:

Վերջապէս, Դիմաքսեանը յաջողեց խօսք բաց անել կանանց ընկերութեան մասին: Բայց այստեղ էլ Պետր Սոլումոնիչը չը թողեց ոչ դրի խօսել: Նա ոտով գլխով ընկրէմ էր այդ ընկերութեանը:

— Սուտ բան է, ինչ ընկերութիւն, ինչ մընկերութիւն: Մի քանի անգործ աղջիկ պարոններ հաւաքւել են, ուզում են իրանց համար դործ սարքել: Կնիկը ինչ է, որ հասարակական գործիչ պառնայ:

Տիկինը այլ ևս չը կարողացաւ իրան վսպել:

— Կնիկը իսկի էլ պակաս չէ տղամարդից: Այդպէս են, այ, պարոն Դիմաքսեան, ես ձեզ չէի՞ ասում, հէնց որ մի քիչ աչք ենք բաց անում, ուզում ենք ուրիշների էլ աչքը բաց անել, սկսում են ծագրել, հալածել: Արի ու այստեղ գործ տես:

— Գործ տես, խը խը խը, գործ տես: Ի՞նչ պիտի անի ձեր ընկերութիւնը, հարցնում եմ, շատ շատ մի ուսումնարան պէտք է բաց անի, օհօհ, երևելի բան: Տօ, թողէք է:

Դիմաքսեանը փորձեց պաշտպանել կանանց իրաւունքները: Բայց իզուր: Պետք Սոլոմոնիչը կատաղի թշնամի էր կանանց գործունէութեան, իսկ աւանձնապէս իւր ամուսնու մասնակցութեանը: Հարկաւ, նա թագցնում էր իսկական պատճառը: Նա կասկածում էր, որ ընկերութիւնը երիտասարդ կանանց համար մի նոր առիթէ տղամարդկանց հետ աւելի ազատ շփուելու համար: Ձէ որ առանց այդ էլ Բարաթեանը արդէն թթւացրել էր նրա սիրտը:

— Դայիանէի համար խօսք չունեմ, եթէ նա ուզում է, կարող է ընկերութեան մէջ մտնել, բայց դու, Աննա, հեռու պահիր քեզ, ինչ գործ ունես ջուհել—ջուլների հետ:

«Ջահել—ջուլներ», ինչ, միթէ Աննան պառան է: Տիկինը կատաղեց և ներքին ալէկոծութիւնից եփած խեցզետնի պէս կարմրեց: Դայիանէն պաշտպանեց նրան: Նա ասաց, թէ անկարելի է, որ Աննան չը մասնակցի ընկերութեանը, քանի որ գործը արդէն սկսւել է: Բացի դրանից, եթէ Աննան հեռանայ, ինքն էլ պէտք է հեռանայ:

— Առանց նրան ինձ համար անյարմար է գործելը, ես չեմ ուզում շատ էլ ինքնազուլս լինել:

Այս դարձւածը դիւր չ'եկաւ Դիմաքսեանին: Նա բացատրեց, թէ ով կամենում է ուրիշներին օգտաւէտ լինել, առաջ ինքը պէտք է սովորի անկախութեան: Իսկապէս նա մի բան էր ցանկանում— տեսնել օրիորդին ազատ որ և է հովանաւորութիւնից, մանաւանդ

տիկինն Բախտամեանի, որի համակրութիւնը զէպի Բարաթեանը անշափ տհաճութիւն էր պատճառում նրան:

Նրա միջամտութիւնը մի նոր գրգիռ ավեց տիկնոջ բարկութեանը: Արդէն նա աւանց այն էլ սիրելի էր տիկնոջը, իսկ այժմ յանդգնում է Գայիանէին ազատել նրա ազդեցութիւնից:

—Լաւ,—հազիւ զսպիւով իւր կատաղութիւնը, ասաց տիկինը,—թողնէք այս խօսակցութիւնը:

Եւ մի վատ հայեացք ձգեց Գիմաքսեանի վրայ: Դա մի լուռ նշան էր, որով նա մի անգամ ընդմիջա յայտնեց իւր հակակրութիւնը երիտասարդին: Պետր Սոլոմոնիչը նկատեց այդ և, կարծես, կնոջը աւելի գրգռելու համար, սկսեց աւելի սիրալիք վարել իւր հիւրի հետ:

—Ես կը կամենայի,—ասաց նա,—որ այդ ընկերութեան մէջ դուք էլ խառն լինէք: Դուք շատ օգուտ կը տայիք:

—Անմիջապէս չեմ խառնուիլ, բայց կողմնակի կերպով կ'աշխատեմ օգտուէտ լինել,—պատասխանեց Գիմաքսեանը, օգուտելով հանգամանքից,—ես մտադիր եմ շուտով ընկերութեան օգտին մի դասախօսութիւն կարդալ:

Լուրը շատ լաւ տպաւորութիւն գործից օրիորդ Գայիանէի վրայ: Նա մինչև անգամ ուրախացաւ: Այն ինչ՝ տիկին Բախտամեանը նկատեց, թէ դասախօսութիւնից հազիւ թէ մի փոքր ի շատէ խոշոր գումար գոյանայ: Օրիորդը ասաց, թէ բանը գումարը չէ, այլ համակրութիւնը: Տիկինը, Գիմաքսեանին գրգռելու նպատակով, յայտնեց, թէ Բարաթեանն էլ մտադիր է թատրոնասէրների մի ներկայացում կազմել:

—Այ, ներկայացումը ուրիշ բան է. ես կարծում եմ հազար բուբլի կը մտնի մեր գանձարանը:

Տիկինը հասաւ իւր նպատակին: Գիմաքսեանը լուռ, աչքերը լայն բաց անելով, նայեց նրա երեսին, այնքան վատ հնչեց նրա ականջին այդ անսպասելի նորութիւնը: Դարձեալ Բարաթեանը, այդ ինչ բան է, մի՞թէ երկու ընկերները սկսում են մրցել կանանց դէմ զալոյ համար:

Արդէն բաւական ուշ էր, ժամանակ էր հրաժեշտ տալու, իսկ նա չէր ուզում կամ, ճիշտն ասած, չէր կարողանում տեղից վեր

կենալ: Կարծես, մի բան նրան կապկըպել էր և կայցրել բազկաթու-  
ռին, որի վրայ նա շարունակ նստած էր ներս մտնելու րոպէից:

Նրա դէմ ու դէմ պատին քաշ արած էր մի մեծ հայելի: Մին-  
չև այժմ նա այդ չէր նկատել: Յանկարծ նրա հայեացքը ընկա-  
լուր փոքրիկ կերպարանքի վրայ, և նա մի անորոշ ցնցողական շար-  
ժում գործեց: Ախ, որքան նա պզտիկ և աննշան էր այդ րոպէին  
իւր աչքում: Փափուկ բազկաթուռը ազահուժեամբ ամբողջովին  
կլանել էր նրան, և միայն երևում էր նրա խոշոր դուռը:

Դարձեալ նա շփոթւեց, դարձեալ ինքնասիրութեան զգացումը  
յուզեց նրա մէջ: Նա կամեցաւ հակառակել մէկին, ում և իցէ,  
վիճել, կուեւի նա պատրաստ էր նոյն իսկ Գայիանէին հէնց իսկոյն,  
առանց այլ և այլի, սաստիկ յանդիմանել: Անսիրտ օրիորդ. ինչու  
չես ճանաչում քո դէմ նստածին: Մի՞թէ կարծում ես, այդ փոքրիկ  
մարմնի մէջ նստած հոգին նոյնպէս փոքրիկ է: Ա՛չ, դու պէտք է  
ճանաչես Դիմաքսեանին, պէտք է զգաս նրա մտքի և հոգու  
թիւնը:

Նա ոտքի կանգնեց յանկարծ, անսպասելի կերպով: Նա գու-  
նատ էր, և ոչ ոք չը դիտէր նրա գունատութեան պատճառը: Այ  
ոք չը խնդրեց նրան չը շտապել, բացի Պետր Սոլոմոնիչից, այն էլ  
կիսաբերան:

Նա դուրս եկաւ շտապ քայլերով: Փողոցի սառն օդը խփեց  
նրա տաքացած ճակատին: Նա ուշքի եկաւ, նա զգաց, որ չափա-  
զանց շփոթւած էր, զգաց նոյնպէս, որ անշուշտ վատ ազդեցու-  
թիւն է թողել օրիորդի վրայ: Մի վայրկեան նա կանգ առաւ փո-  
ղոցի մէջ տեղում, ամուր սեղմեց ճակատը և հառաչելով արտա-  
սանեց:

— Այո, տեսնում եմ, որ այդ օրիորդը ինձ խելքից պէտք է  
հանի:

Նւ քաշքշւելով խոնաւ սալայատակի վրայ, անհետացաւ գի-  
շերային մթութեան մէջ:

Տիկին Բախտամեանը, հետը գնալուց յետոյ, ազատութիւն  
ուեց իւր կատաղութեանը: Արդէն նա բաւական տանջւել էր,  
զսպելով իւր սրտի ալէկոծութիւնը:

— Վերջը դու քեզ էլ, ինձ էլ ծաղրի առարկայ կը դարձնես

ուրիշների մօտ: Տէր Ասուած, ինչ խայտառակութիւն, այն էլ ու՛մ մօտ, մի մի մի...

—Մի երեկելի և պատուական երիտասարդի մօտ: Բնա, Դիմաքսեանը հիանալի մարդ է, նա իմ շատ լաւ բարեկամն է:

—Լաւ բարեկամ ես գտե՛լ, տես ուրիշները ձեռքիցդ չը խլեն հա հա հա:

—Ասում եմ հիանալի երիտասարդ է, դու էլ ասա շնորհ: Այնպէս չէ, Գայիանէ, բարի, խելօք, իմաստուն երիտասարդ է:

Գայիանէն ոչինչ չը պատասխանեց և ոչ մի նշանով չ'արտայայտեց իւր համակրութիւնը կամ հակակրութիւնը: Պետքը Սոլոմոնիչը շարունակեց.

—Իմ աչքում նա ամենքիչը մի դիւժին Բարաթովներ արժէ, ուղիղ մի դիւժին: Նրա մի ծուռ քիթը չեմ փոխիլ տասը սիրուն ֆրանսների հետ, բնա, չեմ փոխիլ քո այդ... այդ լյպտած Բարաթովների հետ:

Այդ ասելով, նա բարկացած անցաւ իւր սենեակը:

—Խելագարեւ է այսօր ինչ է, — գոչեց տիկին Բախտամեանը, ինչո՛ւ է այդպէս կատաղել Իսակ Գասպարիչի դէմ: Կարծեմ, ամենքն էլ գիտեն, թէ ես ինչու համար եմ այդ երիտասարդին ընդունում: Գայիանէ, խո՛մ, դու գիտես, ինչո՛ւ չես պաշտպանում, ես քո պատճառով եմ այս նախատինջը ստանում ամեն օր:

Օրիորդը մի վայրկեան գլուխը թեքեց կրծքին և ոչինչ չը պատասխանեց: Մի ինչ-որ մոլթ, անորոշ կասկած շփոթեցրեց նրան: Նա չէր ուզում տիկնոջ երեսին նայել: Այն ինչ տիկինը միայն կանանց յատուկ նուրբ բնազդումով զգաց նրա շփոթութեան հիմնական պատճառը: Դա միայն օրիորդի համակրութիւնը չէր Բարաթեանին, այլ կար մի ուրիշ, աւելի լուրջ հիմունք:

Ինչո՛ւ Պետք Սոլոմոնիչը այնքան պարզ նախանձում է Բարաթեանին, մտածում էր օրիորդը: Միթէ իզո՛ւր, հէնց այնպէս: Ոչ, ոչ, այդ անկարելի է: Պետք Սոլոմոնիչը թեթեւամիտ, անտակտ մարդ չէ: Անկասկած նրա ամուսնական սուր աչքերը հեռում, գուցէ շատ հեռում մի կասկածելի մոլթ դիժ են նշմարում: Վերջապէս, ինչո՛ւ Գայիանէի սիրտը երբեմն ակամայ, հակառակ խելքին, հակառակ Բարաթեանի մասին կազմած նպաստաւոր կարծի-

քին, ենթարկում է մի վատ, մի գարշելի, մի դիւային կասկածի։  
Նա գլուխը բարձրացրեց։ Տիկինը, բուժ մատը ատամներով  
կծած, նայում էր յատակին։

—Ախ, գոչեց նա յանկարծ, խոյս տալով Գայիանէի հայեացքից,—  
երեխաները քնեցին առանց ինձ համբուրելու։

Նա արագ քայլերով անցաւ կից սենեակը, ուր ննջում էին  
նրա մի զոյգ զաւակները։

Գայիանէն նայեց նրա ետեւից, և մի դառն ժպիտ երևաց նրա  
սիրուն շրթունքների վրայ։

Այդ գիշեր մի ծանր, մի դաժան միտք երկար ժամանակ նրան  
հանգստութիւն չէր տալիս։

## VII

Վերջին ժամանակ Դիմաքսեանը տանը շատ քիչ էր զբաղ-  
ւում։ Հակառակ սովորականին, ամեն երեկոյ նա դուրս էր գալիս  
Մսերեանի հետ զբօսնելու և այնքան երկար ժամանակ մինչև որ  
յոզնում էր։ Նա անհանգիստ էր, տխուր, քիչ էր խօսում, և առհա-  
սարակ շատ զարմացնում էր Մսերեանին։

Մի օր երկու ընկերները գնացին Վէքիլեանի մօտ, ուր նրանք  
դեռ չէին եղել։ Իրաւաբանը թէև իւր ծնողների հետ էր ապրում,  
բայց նրա բնակարանը բոլորովին առանձին էր, բազկացած երկու  
մաքուր և սիրուն կահաւորւած սենեակներից։

Այստեղ ամեն բան իւր տեղն էր, և՛ փափուկ շքեղ անկողինը,  
և՛ թաւշեայ բազկաթոռները, և՛ օրօրելու աթոռը, և՛ կարմիր  
մահուդով ծածկած գրասեղանը իւր բոլոր պարագաներով, և՛ տուա-  
լէտի սեղանը հոտաւէտ իւզերով, բազմաթիւ խոզանակներով և  
այլն և այլն։ Ամեն տեղ երևում էր մաքրասէր, ճշտասէր, զգոյշ և  
ֆրանս Վէքիլեանի սուերը։ Նոյն իսկ սենեակների ձեւը յիշեց-  
նում էր կենողին։

Իրաւաբանը իւր ընկերներին ընդունեց անսահման քաղաքա-  
վարութիւնով, հիւրասիրեց քաղցրահամ խմիչքներով և անուշա-  
հոտ սիգարով։ Նրան առաջարկել էին գաւառում քննիչի պաշ-  
տօն, չէր ընդունել։ Նա կամենում էր անպատճառ Քիֆիլիզում  
մնալ։ Երեք ամիս էր նա սկսել էր պարապել փաստաբանութիւնով  
ւերդեալ հաւատարմատարի օգնականիս կոչումը ընդունած։

Նա պատմեց մի քանի դատաստանական էպիզոդներ, միշտ աշխատելով իւր արհեստի վսեմութիւնը պաշտպանելու փաստաբանութիւնը, իրաւ է, շատերի համար հարստահարութեան աղբիւր է, ասում էր նա, բայց ոչ բարոյական սկզբունքի տէր և բարեխիղճ մարդու համար: Ասպարէզը ընդարձակ է, մարդկութեանը ծառայել կարելի է: Որքան անմեղներ կան պաշտպանութեան կարօտ, քանի քանի կեանքի կարելի է կորստից փրկել: Միևնոյն ժամանակ, այստեղ աւելի հնարաւոր է ազգի համար օգտակար լինել, քան մի ուրիշ տեղ:

— Արդէն ամեն օր զաւառներից հայեր են դալիս ինձ մօտ: Ես վճռել եմ առաջ նրանց պաշտպանել, չետոյ ուրիշներին: Բացի դրանից, սկզբունք եմ դրել հայերից երեսուն տոկոս պակաս վերցնել զոնորարս և մինչև կեանքիս վերջը պէտք է այսպէս անեմ: Մի հարուստ վաճառական հինգ-տասը հազար տալիս է ազգին և իւր անունը անմահացնում: Իսկ ես քիչ քիչ քսան տարի փաստաբանութիւն կ'անեմ, իմ երեսուն տոկոս զիջողութիւնը մի քանի տասնեակ հազարներ կը կազմի: Վարժեմ, հայ ազգը դժգոհ չը պիտի լինի մեզանից:

Նա խօսում էր լուրջ եղանակով, հանդարտ, ամեն բառը առանձին շեշտելով, ինչպէս տաբիբը լրացրած մի փորձած դիպլոմատ: Ժպտոյ չէր հեռանում նրա երեսից, աչքերի բիբերը անընդհատ խաղում էին, ինչպէս մի զոյգ լուսաւոր ջահեր, որ առաջնորդում էին նրան դէպի անդորր, ապահով և անվրդով կեանք:

Դուրս գալով նրա մօտից, Մսերեանը յայտնեց Դիմաքսեանին իւր վրդովմունքը: Նա ասաց, թէ, կարծես, մի բան օրից օր անջատում է նրան իրաւաբանից և թէ դիմանալ չէ կարող այդ մարդու յղկած մարմարիօսի պաշտութեանը:

— Ես կարծում եմ, եթէ աշխարհում ջրհեղեղ լինի, Վէքիլեանը ապահով նստած մի երկար ձողի գլխին, այնտեղից էլ կը ժպտայ:

Իրիկնաբէմ էր, եղանակը ցուրտ: Փողոցների սառած ցիւրը սեւացել էր և կպել դեռնին ամուր քարի պէս: Դանդաղ ձիւնի աստղաձև հատիկները քիչ-քիչ ծածկում էին երկիրը բարակ սպիտակ շղարշով: Օդը անշարժ էր, քամու նշոյլ անգամ չը կար: Բա-

ղաքացիների զբօսանքի սովորական ժամանակն էր: Գոլովինսկից պրոսպեկտի վրայ անց ու դարձ էր անում բաւական մեծ բազմութիւն, զւարճանալով ձմերային այն սառն և դիւրեկան եղանակով, որ հազիւ է պատահում Թիֆլիզում փետուարի սկզբին:

Երկու ընկերները մտան ամբոխի շարքը:

Մտերեանը տաքացած պարսաւում էր մի ինչ-որ հիմնարկութիւն, ուր նա կամեցել էր պաշտօն ստանալ, կառավարիչը նրանից վկայական էր պահանջել: Դիմաքսեանը հանգստացրեց նրան, ասելով, թէ չ'արժէ վրդովւել, եթէ փողի կարօտութիւն ունէ, կարող է նրանից ստանալ:

— Որ սպանես՝ չեմ վերցնիլ, — հրաժարւեց Մտերեանը, — փողի պարտքը բարոյական ծանրութիւն է ինձ համար: Փոռք Աստուծոյ, դեռ շատ էլ քաղցած չեմ, երկու դաս ունեմ:

Նրանք քայլում էին արագ-արագ: Դիմաքսեանը հազիւ կարողանում էր հետևել Մտերեանի լայն քայլերին: Յանկարծ նա սայթաքեց և անշուշտ կրնինէր, եթէ ուղեկիցը իւր ուժեղ ձեռով չը բռնէր նրա թւից: Նա բարձրաձայն ծիծաղեց ինքն իւր վրայ, ոչ այնպէս, ինչպէս ծիծաղում են ականացի սառուցի վրայ սայթաքողները: Դա մի արւեստական ծիծաղ էր, որով նա քօղարկում էր իւր փոքրիկ մարմնի թերութիւնից առաջուցած բնական վրդովմունքը:

Հապիւ նա գլուխը բարձրացրեց, և մի ուրիշ դէպք աւելի վրդովեցրեց նրան: Դէմ ու դէմ դալիս էր Բարաթեանը, ուրախ, զւարթ, գեղեցիկ, առողջ Բարաթեանը — Գայանէի հետ: Յուրոր օրիորդի դէմքին տւել էր մի անբնական կարմրութիւն: Նրա կապոյտ աչքերի մէջ վառում էր կենսականութեան հուրը իւր բոլոր ոյժերով: Գեղեցիկ փետուրով զարդարւած գլխարկի տակից երևում էին դանդուր մազերի ծայրերը: Ի՛նչ սազում էր նրա երեսին և հասակին այդ կակուղ մեխկազոյն շրջան, որ անփոյթ կերպով գրկել էր նրա պարանոցը:

Դիմաքսեանը կամեցաւ երեսը յետ դարձնել, որ անցնողներին չը տեսնի: Բայց Բարաթեանը դեռ հեռւից գլխարկը բարձրացրեց, իսկ Գայանէն մի քանի անգամ գլուխը շարժեց: Նրանք անցան, թողնելով Դիմաքսեանի ականջում իրանց անհոգ քրքինջի հնչիւն-

ները: Նրա ծնկերը դողացին: Բայց ինքնասիրութիւնը թելադրում էր զսպել շփոթութիւնը, և նա դարձեալ ծիծաղեց, այս անգամ աւելի անբնական և աւելի բռնի կերպով:

— Ինչպէս երեւում է, մեր պարոնի աչքը կ'սպել է այդ աղջկան: Ամեն օր նրանց միասին եմ տեսնում:

Երանի քեզ Մսերեան, որ կարողանում ես այդ խօսքերը սառն կերպով արտասանել: Ուշադրութիւն դարձրու քովդ զնացողի վրայ. նա միանգամայն ընկճեւել է, փոքրացել: Նա հազիւ կարողանում է քայլել, նրա շրթունքները և երեսի կաշին ցնցւում են:

— Ի՞նչ մըսում ես:

— Այո՛, — պատասխանեց Գիմաքսեանը, թէ և նրա ամբողջ մարմինը վառւում էր ներքին կրակից:

— Մանկք այն կաթնատունը, ես կամենում եմ մի բաժակ թէյ լսմն:

Նրանք անցան հակառակ մայրի վրայ և մտան մի տան ստորին չարկը: Երկու փոքրիկ սենեակներ լիքն էին հիւրերով: Նրանք նստեցին առանձին սեղանի մօտ, ոչ-հեռու երեք պարոններից, որոնք այդ միջոցին տաք տաք վիճաբանում էին: Մէկը այդ պարոններից, որ աւելի տարիքաւոր էր, պնդում էր, թէ Եջմիածնի նոր բացւած ճեմարանի հիմնական նպատակն է ընտիր հոգևորականներ պատրաստել: Միւսները հակառակում էին, թէ միայն հոգևորականներ պատրաստելը բաւական չէ, ճեմարանը պէտք է ազգային դիտութեան նախադուռը լինի, նա չը պիտի սահմանափակի կղերական հոգով և այլն և այլն:

— Ներողութիւն, մեր դոյութիւնը միայն եկեղեցուց է կախւած, մենք կրօնական ազգ ենք:

— Ուրեմն դուք հերքում էք ազգային դոյութեան առաջին հիմքը — հողը և լեզուն:

Գիմաքսեանը և Մսերեանը ակամայ հետաքրքրեցին այս վիճաբանութիւնով և լուռ լսում էին:

Ցարիքաւոր պարոնը բարկացած ընդհատեց իւր սեղանակիցներին խօսքը և վերկացաւ:

— Այդպէս էք, այ՛, — զոչեց երիտասարդներից մէկը, — միշտ փակւում էք վիճաբանութիւնից: Եղուր չէ ասում Գիմաքսեանը, թէ չետադէմները դիտեն միայն պատի ետեւից կուշի:

—Ի՞նչ, Դիմաքսեան:

—Նա, որ հնապաշտների անմիտ կուռքերը ջարդ ու փշուր է անում:

Տարիքաւոր պարոնը ուսերը թօթւեց և դուրս եկաւ Միւսները նոյն վայրկեանին նկատեցին Դիմաքսեանին և միաժամանակ շփոթւելով կամացուկ դուրս գնացին:

Դիմաքսեանի սիրտը լցւեց անսահման ինքնագոհութեամբ: Այդպէս, ուրեմն, արդէն նրա մասին խօսում են, նրա խօսքերը ապացոյց են բերում, նրա առաջ խոնարհուում են: Ահա խնկրի ոյժը: Եւ ձի կարող է այսուհետեւ ասել, թէ նա կոչւած է հասարակական մտքի առաջնորդ դառնալու: Դարձեալ նա բարձրացաւ իւր աչքում, մոռացաւ մի քանի բոպէ առաջ կրած անախորժ զգացումները: Նա զգաց իւր մէջ մի այնպիսի բարոյական ոյժ և ոգևորութիւն, որ մինչև այդ ժամանակ չէր զգացել:

—Լսեցիր,— ընդհատեց նրա մտքերը Մսերեանը, — կը նշանակէ խօսքդ արդէն սկսել է ազդել, շատ ուրախալի է այդ:

Դիմաքսեանը պատրաստ էր գրկել և համբուրել ընկերոջը, այդ բարեսիրտ, աննախանձ և սիրելի Մսերեանին:

Նա շտապեց դուրս գալ կաթնատնից: Այժմ նա զգում էր աշխատելու անզսպելի պահանջ: Ա՛յ, չը պիտի մտածել ուրիշ ոչ մի բանի մասին, պէտք է դործել, օգուտ բերել և անուն վաստակել: Խնկրի ուժով ոտնատակ անել մարդկանց ծաղրը, արհամարհանքը: Թող անուշադիր թողնեն նրան գեղեցկադէմ կանաչք, կը զայց ժամանակ ամենքը կը խոնարհեն և երկրպագութիւն կը տան նրա հանճարին: Երբէք նա չի ընկնիլ աշխարհի հաճուքների ետևից: Երբէք իւր թանգադին օրերը չի վատնիլ անմիտ կենցաղավարութեամբ: Սիրել մէկին, ինչո՞ւ, քանի որ կարելի է սիրել ամբողջ մարդկութիւնը: Սիրել արդեօք. ո՛չ, ատել և ատելով հանդերձ գործել ամենքի համար:

Այսպէս էր մտածում նա դրսում, իսկ երբ տուն հասաւ, կրկին պատկերացաւ նրա առաջ զւարթ, ուրախ, գեղեցկադէմ Բարաթեանը: Այ՛ո, նա կեանքի մէջ յաջողութիւն կ'ունենայ, նրան կը շրջապատեն սիրուն կանաչք, նա կը փայլի հարուստ սալոններում, նրա ետևից զգւանքով կ'ընգնեն մայրերը: Իսկ ինքը կը մնայ աննկատելի, ընկճւած, ճնշւած հասարակական շրջաններում, կա-

նանց ընկերութեան մէջ: Նրան կը համարեն տաղտկալի, ձանձրալի, տգեղ, որովհետեւ նա չունէ Բարաթեանի շուքը և հրապոյցը, նրա ուրախ և սիրուն դէմքը, նրա համարձակ և էլեգանտ ձեւերը: Կրկին նրա մտքերը տակն ու վրայ եղան, նորից զառնութիւնը համակեց նրա սիրտը: Նա կատաղեց իւր թուլութեան դէմ, նա անիծում էր իւր փոքրոգութիւնը և, միևնոյն ժամանակ, չէր կարողանում խեղդել իւր մէջ այն վտանգաւոր ցեցը, որ սկսել էր ուտել նրա սիրտը և որի անունն էր նախանձ:

## VIII

Օրիորդ Գայիանէն աշխատում էր տարածել Դիմաքսեանի դասախօսութեան տոմսակները: Առանձին սիրով օգնում էր նրան Բարաթեանը, ոչ այնքան իւր ընկերոջ ունկնդիրների թիւը շատացնելու, որքան օրիորդին և տիկնոջը դիւր գալու համար:

Իսկապէս նա Դիմաքսեանի դասախօսութեանը մի առանձին նշանակութիւն չէր տալիս և յաճախ թեթեւակի հեգնում էր նրան օրիորդի ու տիկնոջ մօտ: Իւր հոգոյ խորքում նա այն կարծիքի էր, որ Դիմաքսեանը անկարող է որ և է միտք լոգիկաբար, դրական ձևով, անշեղ արծարծել: Նա զգում էր ընկերոջ եռանդը, բուռն ձգտումները ոչժը, բայց համարում էր նրան անկանոն խելքի տէր: Նա հաւատացած էր, որ այդ եռանդը ու ձգտումները նրա մէջ առաջ են գալիս անյազ փառասիրութիւնից, որ նա ճգնում էր հասարակութեան մէջ հռչակ ձեռք բերել:

Բացի դրանից, նա Դիմաքսեանին համարում էր վերին աստիճանի նախանձոտ: Նա գիտէր, որ ընկերը անտարբեր չէ դէպի օրիորդ Գայիանէն: Եւ այս առիթով նա մտքում ծաղրում էր Դիմաքսեանին, աչքի առաջ ունենալով նրա փոքրիկ և տգեղ կերպարանքը: Միևնոյն ժամանակ, նա սրտի խորքում զգում էր մի անբացատրելի երկիւղ այդ մարդուց և շատ էլ դիւրին բան չէր համարում նրա հետ մրցելը:

Իսկ օրիորդ Գայիանէն օրից օր աւելի ու աւելի ընտելանում էր Բարաթեանին: Նրանք տեսակցում էին այժմ շատ յաճախ: Իւր բարեբարոյ բնաւորութեան շնորհով նա փոքր ինչ գրաւել էր Պետր Սոլովոնիչին, գոնէ այնչափ, որ կարողանում էր շարաթը մի կամ

երկու անգամ այցելել օրիորդին: Ուրիշ ժամանակ նա Գայիանէի հետ տեսնուում էր մերթ ծանօթ ընտանիքներում, մերթ թատրոնում, իսկ ամենից աւելի փողոցում:

Սիրոյ բացարձակ արտայայտութիւն տակաւին տեղի չէր ունեցել նրանց մէջ: Սակայն երկուսն էլ զիտէին, որ միմեանց համակրում են:

Մի անգամ Բարաթեանը խօսք բաց արեց Դիմաքսեանի մասին և թոյլ տւեց, որ օրիորդը ասէ իւր կարծիքը: Գայիանէն գուշեց Դիմաքսեանին, համարելով նրան շատ խելօք, մինչև անգամ տաղանդաւոր: Բարաթեանը քթի տակ թեթևակի ծիծաղեց, օրիորդը շփոթւեց:

— Իսկ ձեր կարծիքով նա ի՞նչպէս մարդ է:

Բարաթեանը մի քանի վայրկեան մտածեց, ապա խորհրդաւոր եղանակով արտասանեց.

— Նա, ըլլը, նա անօրմալ մարդ է:

Ուրիշ նա ոչինչ չ'աւելացրեց, այս երկու խօսքով արտայայտած համարելով իւր ամբողջ գաղափարը Դիմաքսեանի մասին:

Կասախօսութեան երեկոյ նրանք միասին գնացին կլուբ: Հակառակ սպասածին դաշլիճը կիսով չափ էր միայն լիք: Շատերը տոմսակների գները վճարել էին, իրանք չէին եկել: Հանդիսականների մեծ մասը բաղկացած էր ուսուցիչներից և վարժուհիներից: Կային և՛ մի քանի գուռոճ զոյգեր, որոնք իրանց արիստոկրատ էին համարում այն հիման վրայ, որ միջոց ունէին ժամանակակից մօդայով հագնուել: Իսկ վաճառական դասից շատ քչերն էին ներկայ:

Դաշլիճի ծայրում երեւում էր դրքակալի նման մի նեղ սեղան, որի վրայ դրած էին մի բաժակ և մի շիշ ջրով լի:

— Ճիշտ փիլիսոփայութեան պրօֆեսսորի ամբիոն, — հեզնեց Բարաթեանը:

Յետոյ նա, ներողութիւն խնդրելով Գայիանէից, թողեց նրան մի ծանօթ տիկնոջ հետ, շտապեց Դիմաքսեանի մօտ:

Կասախօսը շրջադասուած էր իւր ընկերներով: Մաքուր, նորաձև հագնուած Վէքլիւանը, տեսնելով Բարաթեանին, զլստով մի ծաղրական շարժում դործեց դասախօսի վերաբերմամբ: Նրա նոր սափրած կոտրիկ թուխ երեսի կաշին փայլում էր ինչպէս լայկած

ձեռնոց: Այդ երիտասարդը առհասարակ ամեն մի հասարակական գործի և գործիչի վերաբերում էր թերահաւատօրէն, բայց երբէք պարզ չէր արտայայտում իւր կարծիքը: Միայն նրա փոքրիկ, խորամանկ աչքերի մէջ կարելի էր կարդալ այդ կարծիքը, որ միշտ աննպաստ էր, մանաւանդ Դիմաքսեանի վերաբերմամբ:

Նա փոքր ինչ ակնածում էր միայն Բարաթեանից, որի սուր լեզուն, անփոյթ վարմունքը և, միևնոյն ժամանակ, զգոյշ դատողութիւնները թէ նրան դուր էին դալիս և թէ վախեցնում էին:

— Ինչո՞ւ չէ սկսում, — հարցրեց Բարաթեանը:

— Սանխօն խորհուրդ չէ տալիս շուտ սկսել:

Վէքիլեանը «Սանխօ» անւանում էր Մսերեանին, հարկաւ, Դոնքիշոտի տեղ ընդունելով Դիմաքսեանին:

Այդ միջոցին դասախօսը մօտեցաւ հայելուն փողկապը ուղղելու: Նա հազած էր Ֆրակ, որ նրա փոքրիկ ու ոսկորոտ մարմնի անկանոն մասերը աւելի որոշ էր կացուցանում: Հայելու մէջ նա տեսաւ իւր ետեւում կանգնած Բարաթեանին: Մօտալուտ համեմատութիւնը դարձեալ զրգռեց նրա բնական նախանձը:

Նա զունատ երեսը դարձրեց, բարեկեց ընկերոջը և, ճակատը շփելով, դուրս եկաւ բեմ: Հանդիսականները նրան ընդունեցին կարճատե և դանդաղ ծափահարութիւնով:

Դասախօսութիւնը բաղկացած էր երկու մասից. առաջինը ընդհանրապէս քաղաքատնտեսութեան էր վերաբերում, երկրորդը երկրի տնտեսական վիճակին:

Ամուր, անյողողղ և ազդու ձայնով նա բացատրում էր զիտութիւնը: Նա խօսում էր ոչ իբրև մի մասնագէտ չոր ու ցամաք թեօրիայի սառն տրամաբանութիւնով, այլ պարզ, համառօտ և մտուչելի ոճով, ինչպէս մի իսկական պրոպագանդիստ:

Ունկնդիրները հետաքրքրեցին:

Հետզհետէ նա ոգևորւում էր: Մերթ նրա ձայնը բարձրանում էր, մերթ մեղմանում: Երբեմն նա կանգ էր առնում և մի քանի կաթիլ ջրով կոկորդը թրջում: Նա չէր շփոթւում, չէր դողում, ինչպէս անփորձ դասախօսները: Նա ազատ տիրում էր խօսքին, որպէս հմուտ քարոզիչ կամ շնորհալի դերասան:

Շարքերով ցցած գլուխները նրա աչքում խառնել էին և կազմել մի տգէտ, խաւար ամբողջութիւն, դէպի ուր նա սրինառում էր լուսոյ շողքերը: Ո՛րքան նա բարձր էր զգում իրան այդ ամբոխից: Թւում էր նրան, թէ կանգնած է ուսուցչական ամբիոնում և իւր առաջ նստած են անչափահաս աշակերտներ:

Նա աւարտեց առաջին մասը այնպէս, որ, կարծես, մի հետաքրքրական վէպ ընդհատեց: Նրան երկար ժամանակ ծափահարեցին, չը դուրս եկաւ շնորհակալութիւն յայտնելու:

Յոգնած, քրտնած, գունաթափ նա նստած էր աթոռի վրայ, երբ ամենից առաջ ներս վազեց Մսերեանը և, իւր գրկի մէջ առնելով նրան, գոչեց.

— Շնորհաւորում եմ, բարեկամս, երբէք չէի կարծում, թէ դիտութիւնը կարելի է հայերէն լեզուով այդքան հետաքրքրական և հասկանալի դարձնել:

Եկան բժիշկ Սալամբէկեանը, Վէքիլեանը և ուրիշները: Իրաւարանը մի կոմպլիմենտ ասաց Դիմաքսեանին, բայց նրա աչքերը դարձեալ հակառակն էին արտայայտում: Բժիշկ Սալամբէկեանը դժգոհ էր հասարակութիւնից և դասախօսի ջանքը իզուր էր համարում:

Բարաթեանը ներս առաջնորդեց տիկին Բախտամեանին, օրիորդ Կայանէին և ուրիշ երկու տիկինների:

Բախտամեանը այնպէս էր հագնւել, որ, կարծես, պարահանդէս էր եկել: Նա Դիմաքսեանին ծանօթացրեց իւր հետ բերած տիկինների հետ, որոնք նոր ընկերութեան ղեկավարներից էին: Բայց դասախօսի ուշը ուրիշ կողմ էր: Առաջին անգամ էր նա Դայիանէին հանդիպում հասարակութեան մէջ: Նա սովորել էր տեսնել նրան կամ տնային անշուք հագուստով, կամ փողոցում վերարկուով:

Այժմ օրիորդը հագած էր թաւշեայ լայն ժապաւէններով զարդարած և վերջին մօղայով նոր կարած բաց մանիշակագոյն զգեստ: Նրա դէմքի վրայ խաղում էր մի գոհունակ ժպիտ, կապոյտ աչքերի մէջ կենսականութեան հուրը վառւում էր տակաւին: չը տեսնւած փայլով, նրա ամբողջ կերպարանքից բուրում էր թարմութիւն և կեանքի հրապոյրները վայելելու անհուն ցանկութիւն:

Նա հաւանութիւն յայտնեց Գիմաքսեանին և իսկոյն հեռացաւ Բարաթեանի հետ, իւր հետ տանելով դասախօսի ուշ ու միաքը:

Գահլճից լուեցին ծափահարութիւններ:

Գիմաքսեանը դուրս եկաւ բեմ գունատ, այլաչլւած, սրտի խորքում մի անտանելի զգացում: Նա յանկարծակի զրգուել էր և՛ Բարաթեանի դէմ, և՛ օրիորդի դէմ, և՛ ամենքի դէմ: Այժմ նրան թուում էր, որ բոլորը կեղծում են, բոլորը ներքուստ ծաղրում են նրան, համարում են մի տեսակ խենթ, դուրս է եկել և հասարակութեանը ձանձրացնում է իւր ատենաբանութիւնով:

Նա մի կերպ զսպեց իրան: Անցաւ առաջին յուզմունքը, նա հետզհետէ յափշտակեց իւր ճառով, մոռացաւ ամեն ինչ և խօսում էր աւելի ազատ, քան առաջ: Բայց այդ երկար չը տևեց: Յանկարծ նրա հայեացքը ընկաւ երկրորդ շարքի ծայրին: Պատին քաշ արած կանթեղի լոյսը սփռւել էր ուղիղ նրանց վրայ... Բարաթեանը, թեքւած Գայիանէի կողմ, շնչալով խօսում էր: Օրիորդը երեսը հովհարով ծածկել էր, որ ծիծաղը հասարակութիւնից թաղցնի:

Այո, մէկը սրախօսում էր, միւսը ծիծաղում: Ինչո՞ւ, ո՞ւմ վրայ, միթէ նրան են ծաղրում: Օօօ, այդ արդէն յանդգնութիւն է: Ի՞նչպէս, նրան չեն յարգում նոյն իսկ այդ միջոցին, երբ նա կատարում է իւր բարոյական պարտքերից մինը:

Նա կորցրեց իւր խօսքի կապը, այլաչլւեց, կմկմաց, սկսեց քրքրել ձեռքի տակ դրած թերթիկները: Հասարակութեան մէջ բարձրացաւ մի խուլ շնչիւն: Յաջող սկսւած դասախօսութիւնը միթէ խայտառակ պիտի աւարտէր:

Վերջապէս, նա ուշը ժողովեց, գտաւ խօսքի թելը: Շարունակեց, բայց բոլորովին տարբեր և տարօրինակ եղանակով:

Այժմ նա չէր դասախօսում, այլ վիճում էր: Գիտութեան չէզոք քարոզիչը փոխւել էր կրքոտ հարւածողի: Երկիրը չէ հարստահարում, մեքենայական արդիւնաբերութիւն չը կայ, ժողովուրդը աղքատ է, քաղաքային հասարակութիւնը թմրած: Գրամատէրները ընկերական հոգի չունեն, ամեն ինչ նիրհում է նահապետական անշարժութեան մէջ: Ո՞վ պէտք է զուրկ տայ խաւարի մէջ ղեզերող ամբոխի հողուն, ո՞վ պէտք է լուսաւորէ նրա միաքը, ցոյց տայ

նրան բարօրութեան ճանապարհը: Կրթած դասը, ժամանակակից գիտութեան պաշար ունեցող երիտասարդութիւնը:

— Ահա հէնց այդ դասակարգի դէմ ես շատ բան ունեմ ասելու, — գոչեց նա, ձայնը բարձրացնելով:

Սօ, տգեղ և ալլանդակ է ինտելիգենցիայի բարոյական պատկերը: Նա անտարբեր է չէպի երկրի վիճակը, եսամոլ է, շահախնդիր է: Ձը կայ նրա համար ընդհանուրի շահ, ամեն ինչ պըտտում է սեպհական ապահովութեան առանցքի շուրջը: Նա աւելի զազրելի, աւելի դատապարտելի է, քան տգէտ ամբօխը:

Նոյն պահին նրա թափառող հայեացքը դարձեալ ընկաւ Բարաթեանի և Գայիանէի վրայ: Օրիորդը լսում էր խորին ուշադրութեամբ, զլուխը առաջ ցցած: Բարաթեանը նայում էր առաստաղին: Պարզ էր, որ նրան դուր չէր զալիս ընկերոջ բանախօսութիւնը և անհամբեր սպասում էր վերջանալուն: Ան, այդ շատ լաւ է, տանջւիբ, կատաղիր: Բայց այդ ի՞նչ է, նոյն անհամբերութիւնը նշմարում է և՛ ուրիշ դէմքերի վրայ: Ոմանք զարմացած են, միմեանց հարցական նշաններ են անում: Միայն ընդհանուր լուսթիւնը ոչ ոք չէ խանգարում:

Մէկը աթոռը զըրգեցնելով վերկացաւ տեղից և դուրս գնաց: Դա Վ. Է. քիլեանն էր:

Ոգևորութիւնը տեղի տւեց ամօթի զգացմանը: Դասախօսը զգաց, որ անշափ շեղւել է նիւթից: Բայց նրա սիրտը տակաւին լիքն էր թոյնով: Բարաթեանի դէմքը նրան կատաղեցնում էր: Բոլոր հարւածները նա մտքում ուզում էր ընկերոջ դէմ, այն ընկերոջ, որ այժմ նրա աչքում թշնամու հաւասար էր, որովհետև նա այնքան մօտիկ էր Գայիանէին:

Նա սթափւեց, մի կերպ ամփոփեց իւր ծայրայեղ խօսքերը մի վերջաբանով: Երբ նա աւարտեց, մի քանի ուսուցիչներ միայն ծափահարեցին, բայց ծափահարեցին եռանդով, ոգևորած և բարձրաձայն զուարով շեղեցէ Դիմաքսեանը, կեցցէ Դիմաքսեանը: Միւս ունկնդիրները շտապով վերկացան և դիմեցին դէպի դռները:

Սիրտը դառն զգացումներով լի, ինքնասիրութիւնը խոցոտած, նա հեռացաւ բեմից: Այլ ևս ոչ ոք չէկաւ նրա մօտ: Նա միայնակ էր: Նա անհամբեր սպասում էր Մսերեանին. նա, միայն նա է անկեղծ, աննախանձ, բարի և վեհանձն:

Բայց աւաղ, «իդէալիստի» դէմքը տխուր էր: Նա <sup>ուրախ</sup> էր Արսէնի անաջողութեան պատճառով: Նա բռնեց ընկերոջ թևից և նրա հետ միասին դուրս եկաւ լուռ և աչքունքը կիտած:

— Ախ, Մսերեան, — գոչեց յուզմունքից զողացող Դիմաքսեանը, երբ նրանք կառք նստեցին, — ես դժբաղչ մարդ եմ:

Բարեսիրտ ընկերը գիշերային մթութեան մէջ նայեց նրա արտասուալից աչքերին և արտասանեց.

— Ի՞նչ ամենարագաւոր մարդը կը լինես:

### IX

— Ես այդ տեսակ խօսող կեանքումն չեմ տեսել: Ժամանակով կարող է մտքակում Աֆանասիեւիչի տեղը բռնել: Լեզու խօսմ չէ, կրակ է: Ախտոս որ ուշ հասայ. նեղոխմկաներ բաշխող կոմիսսիան երէկ բանը շատ երկարացրեց: Տասն ու վեց հազար երեք հարիւր տասն ու չորս մանէթ սկիզկա արեցինք: Ապրես Դիմաքսեան. Բարաթովդ գլուխը քաշ արած այնպէս դուրս եկաւ, ինչպէս պոչը կտրած զոջ կատու: Հապան, հնց էր, քեզ նման ուսումնականներին այնպէս էլ հարկաւոր էր ներկել: Ապրես, Դիմաքսեան, ապրես:

— Իսկ ես չը հաւանեցի: Խնչպէս կարելի է կոպիտ խօսել, կարծես, մարդիկ տոմսակի փող էին տւել եկել, որ հայհոյանք լսեն: Նա կուռում էր, խօսմ չէր խօսում: Ճշմարիտ են ասում, որ նա անորմալ մարդ է, այսինքն խելքը գլխին դրուստ չէ:

— Խելքը գլխին դրուստ չէ, դրուստ չէ, հա հա հա: Քո կարծիքով ո՞ւմ խելքն է դրուստ, ով որ դրուստ դէմք ունէ, չէ. հասկանում ենք, հասկանում ենք: Հիմա՞ դու տես ինչպէս առաջիկայ տարի այդ անորմալին գլխանից ընտրել կը տամ, իսկ քո Բարաթովդ իւր օրումը այդ պատիւը չի տեսնիլ, թէ կուզ տրաքւի էլ, այ քեզ անորմալ...

Խօսակցութիւնը տեղի ունէր ամբողջ ընտանիքի ներկայութեամբ, ճաշին: Փայտանէն լուռ էր, իսկ Ովսաննան զբաղւած էր երկու մանկահասակ աղջիկներով — Լիզոչկայով և Նլէչկայով, որոնք ուտելով հանդերձ ծիծաղում էին բարձրաձայն և խանգարում իրանց ծնողների խօսակցութեանը:

Պետր Սոլովանիչը գոռաց նրանց վրայ և, դառնալով կնոջը, յանդիմանեց, որ վատ է կրթում զաւակներին:

Տիկինը աչքերը լայն բաց արեց և մի քանի վայրկեան նայեց երեխաների երեսին այնպէս, որ, կարծես, կոկորդուս ոսկոր մնաց: Փոքրիկները գլուխները միաժամանակ թեքեցին, խուսափելով իրանց մօր սպանալից հայեացքից:

— Ի՞նչ աչքերիս մի լաւ մտիկ արէք,— յետոյ, Լիզովկա, քեզ եմ ասում, Ե՛լեչկա, քեզ եմ ասում, ուղիղ, ուղիղ:

Կարծես, նրա աչքերի մէջ մանկական լեզուով գրւած էին մանկավարժութեան բոլոր կանոնները, որ պէտք է առանց խօսքի իսկոյն ազդէին:

— Իսկ ես,— յարեց Պետր Սոլոմոնիչը,— չեմ ասիլ աչքերիս մտիկ արէք, կասեմ մատներիս մտիկ արէք: Եթէ մէկէլ հըռ հըռ. ծիծաղէք, ականջներդ այնպէս կը քաշեմ... որ Բարաթովիդ էլ հերն եմ անիծել:

— Պետիա, Պետիա,— դարձրեց տիկինը իւր կրթիչ աչքերը մարդուն,— դու քեզ մոռանում ես: Առաջինը Բարաթեանը այստեղ գործ չունի, երկրորդը տասն ու իններորդ դարի վերջն է:

— Ասելդ ի՞նչ է:

— Ասելս այն է, որ մեր ժամանակում ականջ քաշելով երեխայ չեն կրթում:

— Հերիք է, քո հօրն ողորմի, ես դարի մարի հետ բան չունեմ, դու շատ ես երես տալիս երեխաներին:

Ժամանակակից տիկինը սառն և հանդիսաւոր եղանակով պատասխանեց.

— Ես նրանց կրթում եմ նոր սիստեմով:

Գայանէի միտքը հեռու էր այս ընտանեկան տեսարանից, որ գրեթէ ամեն օր կրկնւում էր նոյն վարիացիաներով: Գլւանքով նա չիշում էի այն սովորական պահը, երբ առհասարակ տեսակցում էր Բարաթեանի հետ: Նա մտքում բուլէները նոյն իսկ վայրկեանները հաշուում էր, թէ երբ կը հասնի ցանկալի հինգ ժամը, երբ նա սովորաբար Ովսաննայի հետ դուրս էր գնում լմաքուր օդ շնչելու:

Ճիշդ այդ ժամին նա Դվորցովայեա փողոցում հանդիպում էր Բարաթեանին զբօսնելիս կամ որ և է մազազիացի առաջ կանգնած վիտրինում դարսած իրերը զննելիս: Տեսնելով միմեանց, եր-

կուսն էլ զարմացական նշան էին անում, իբրև թէ չէին սպասում հանդիպել իրար:

Ովստանն առ այժմ նրանց խանդարել չէր կարող, քանի որ խօսակցութիւնը սովորական բարեկամական սահմանից չէր անցնում: Բայց ինչ փոյթ, նրանք արդէն միմեանց միտքը հասկանում էին:

Տիկին Բախտամեանին շատ լաւ յայտնի էր, թէ ում և ինչու համար է Փայլանէն ամեն երեկոյ դուրս գալիս: Նա չէր խանդարում օրիորդին, որովհետև կամայ ակամայ ստիպւած էր ազատամիտ մօր դեր կատարել: Նա գիտէր, որ բազմը հազիւ Փայլանէին յաջողի աւելի լաւ ամուսնացու գտնել: Սակայն երբեմն վրդովւում էր հոգոյ խորքում: Նա, այդ երիտասարդ, գեղեցիկ կինը, որ համոզւած էր, թէ ընդունակ է մի քանի Փայլանէներ նսեմացնել, յանկարծ խնամող մօր պաշտօն է կատարում, իրանից միայն հինգ տարի երիտասարդ օրիորդի համար:

Երբ այդ մասին մտածում էր, երբ նայում էր իւր ամուսնու խորշումս երեսին, սպիտակ մազերին, երբ համեմատում էր նրան այն առոյգ, ծիծաղկոտ, ուրախ երիտասարդի հետ, այն ժամանակ տիկնոջ սիրտը լցւում էր դառնութեամբ: Նա նախանձում էր Փայլանէին: Նա իւր սրտում զգում էր մինչև անգամ ատելութիւն դէպի օրիորդը: Եւ օրից օր նա Փայլանէի վերաբերմամբ դառնում էր անհամբեր, դիւրագրգիռ: Միևնոյն ժամանակ, մի ծանր միտք, կարծես, հալածում էր նրան:

Մի առաւօտ տիկինը մտաւ Փայլանէի սենեակը: Օրիորդը լուսամտի առաջ նստած թղթատում էր մի նոր գիրք, որ Բարաթեանն էր խորհուրդ տւել նրան կարդալու:

— Փայլանէ:

Նա գլուխը բարձրացրեց:

Տիկինը սովորականից աւելի էր չուզւած:

— Ես ուզում եմ այսօր հինգ ժամին քեզ հետ զնալ տիկին

Միրզախանեանի մօտ:

— Ինչու համար:

— Ընկերութեան գործերի մասին խօսելու:

— Կանոնադրութիւնը ստացւել է:

—Ոչ, դեռ չէ ստացւել, բայց հաստատուել է:

—Այդ ես գիտեմ: Բայց քանի որ չէ ստացւել, ինչ խօսելու բան ունենք:

—Ուրեմն չես ուզում ինձ հետ երեկոցեան հինգ ժամին գնալ Միրզախանեանի մօտ:

—Եթէ անպատճառ ցանկանում ես, գնանք,—պատասխանեց Գայիանէն նշմարելի դժկամակութիւնով:

—Ինչպէս տեսնում եմ, չես ուզում գնալ լաւ, ես չեմ ստիպուած: Ես առանց քեզ էլ կարող եմ գնալ:

Նա մի սուր հայեացք ձգեց օրիորդի աչքերի մէջ: Գայիանէն գլուխը խոնարհեցրեց:

—Գայիանէ:

Օրիորդը դարձեալ գլուխը բարձրացրեց:

—Երեկոցեան տանն ես ուզում մնալ:

Օրիորդը մի քիչ տատանւեց, ապա համարձակ պատասխանեց.

—Ոչ, դուրս կը գամ մի քիչ զրօնելու:

Տիկինը ժպտաց:

—Դուրս կը գաս մի քիչ զրօնելու, այսինքն երկու, երկք, չորս ժամ:

Եւ նա աւելի սուր նայեց օրիորդի կապոյտ աչքերին: Մի քանի վայրկեան նրանք լուռ էին: Օրիորդը երեսը դարձրեց դէպի լուսամուտը, որտեղից երևում էին փոքրիկ պարտիզի տերեւաթափ ծառերը: Իսկ տիկինը աչքերը սևեռել էր նրա կիսադէմքին:

—Դու ինձանից իզուր ես թագցնում, ես ամեն բան գիտեմ:

Տիկինը աշխատում էր խօսել մեղմ, բարեկամակուն եղանակով: Բայց ձայնը մատնում էր նրան. նա յուզւած էր:

—Դու լռում ես, ուրեմն ես չեմ սխալւում: Ե՛հ, ինչ կայ, նա լաւ տղայ է, դու գիտես, որ ես էլ շատ եմ հաւանում նրան:

Մինչև այդ վայրկեան Գայիանէն չէր նայում նրա կողմը: Անթից ու կասկածից ցնցողաբար դողացող մատներով նա անընդհատ փաթաթում էր և բաց անում իւր կրծքի ժապաւէնը: Վամացուկ գլուխը ծռեց և նայեց տիկնոջ երեսին, ինչպէս մի մեղանշած երեխայ, որ ամաչում էր իւր արարքից:

— Դու կարծում ես կը հակառակեմ՝ ո՛չ, Գայիանէ, մի՛ վախե-  
նալ: Ապա մէկ էլ մտիկ արա աչքերիս և ուղիղն ասա:

Փարատեց օրիորդի սրտում ծանրացած կասկածը: Ո՛չ, ան-  
կարելի է, որ ուրիշ բան լինի: Տիկինը ազնիւ է, տիկինը սիրում  
է նրան անկեղծ սրտով և երբէք երբէք խոչնդոտ չի լինիլ նրա  
երջանկութեանը: Զբացաւ անվստահութիւնը, մի ինչ որ ներքին  
ոյժ մղեց նրան դէպի տիկնոջ գիրկը, և զլուխը հանդարտ թեք-  
ւեց նրա ուսի վրայ:

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ: Ես գիտէի, գիտէի, որ  
այդպէս պէտք է լինի:

Տիկինը իւր զլուխը բարձր պահած, փափուկ սրածայր մատ-  
ներով շոշոշուժ էր օրիորդի մազերը: Նկատելի էր նրա դէմքի վրայ  
մի թեթեւ գունատութիւն, նկատելի էին նոյնպէս ցնցուձներ նրա  
շրթունքների վրայ, որ այնպէս անխնայ կրծոտում էր նա ատամներով:

— Ուրեմն սիրտներդ բաց էք արել միմեանց, ասան, բոլորը  
ասա, ո՛չ մի բան մի՛ թաղցնիլ: Դու լաց ես լինում, ինչո՞ւ, միթէ  
քեզ նման, հա հա հա, բաղդաւորը լաց կը լինի... Միթէ ճշմա-  
րիտ է, որ մարդիկ երջանկութիւնից արտասուում են, ես այդ բա-  
նին չեմ հաւատում: Ասան, դու նրան սիրում ես:

— Այո՛...

— Նա էլ քեզ է սիրում:

— Այո՛, կարծեմ, չը գիտեմ...

— Այո՛, կարծեմ, չը գիտեմ: Զեմ հասկանում ասածդ: Ուրեմն  
բացատրութիւն չէ եղել:

— Դեռ ոչ:

Տիկինը բաց թողեց օրիորդի զլուխը: Նրա շրթունքները դա-  
դարեցին ցնցելուց: Նա հազիւ զսպեց հառաչանքը:

— Դեռ ո՛չ, ինչո՞ւ:

— Զը գիտեմ:

Օրիորդը աչքերը սրբում էր թաշկինակով:

— Բաց ինչիցն ես իմանում, որ նա քեզ սիրում է: Գոնէ մի  
խօսք ասել է այդ մասին, մի նշանով ցոյց է աւել իւր սէրը:

— Սիրտս է վկայում, որ նա ինձ սիրում է:

— Այդ շատ քիչ է, սիրելիս, սրտի վկայութիւնը մի մեծ բան

չէ. իմ սիրտս էլ ուրիշ բան է վկայում, բայց ես իրաւունք ունեմ...

—Ի՞նչ ասացիր:

—Ոչինչ, Գայիանէ, ոչինչ: Ինչ՞ալ այդպէս յանկարծ վախեցար, ես մի բան չ'ասացի:

Օրիորդը կարմրեց: Բայց նոյն վայրկեանին կրկին նայեց տիկնոջ աչքերին և այնտեղ նկատեց այն, ինչի մասին վաղուց կասկածում էր—նախանձ:

Նա իսկոյն փոխեց: Դարձեալ չար, անտանելի, քստմենլի միտքը պղտորեց քանի մի բոպէ դիւրեկան կերպով բորբոքած սիրտը: Այլ ևս նա չը կարողացաւ և չէր կամենում շարունակել այդ երկդիմի, նուրբ ու կասկածոտ խօսակցութիւնը: Նա վեր թռաւ տեղից:

Տիկինը անշարժ նստած էր և, արմունկը լուսամտի յատակին յենած, նայում էր դէպի դուրս:

Երկուսն էլ միմեանց դէմ մի վատ զգացում ունէին իրանց սրտի խորքում, այնտեղ, այն անմատչելի անկիւնում: Երկիւսի համար էլ ծանր էր, անախորժ, ամօթալի այդ զգացումը:

Տիկինը աւելի ամաչում էր, օրիորդը աւելի վրդոված էր: Անկարելի էր աւելի հեռու գնալ, հակառակ դէպքում կամ պէտք է շարունակ կեղծէին կամ, վերջապէս, պէտք է միմեանց հաղորդէին այն, ինչ-որ նրանց գաղտնիքն էր, խորհրդաւոր, երկիւղալի գաղտնիք, որ պէտք է երկու կանանց մէջ բաց անէր մի մեծ վիհ:

Իսկ լուութիւնը աւելի անտանելի էր:

Տիկինը կամացուկ վերկացաւ տեղից: Նա ծանր քայլերով, գլուխը կրծքին խոնարհեցրած, դուրս գնաց սենեակից:

Օրիորդը երեսը թաղեց բարձի մէջ և սկսեց հեկեկալ: Իսկ երբ Ովսաննան ներս մտաւ և նրան ճաշի հրաւիրեց, նա մերժեց:

Նոյն օրը երեկոցեան նա սովորականից վաղ դուրս եկաւ տնից և սովորականից շատ ուշ վերադարձաւ, այն էլ ոչ Ովսաննայի հետ: Նա մի արտասովոր տենդային դրութեան մէջ էր: Հարկաւ, այդ բանը տիկնոջ աչքից չէր կարող խոյս տալ: Բայց տիկինը ոչինչ չէր խօսում: Նա առհասարակ լուռ էր, տրտում և բարկացած: Նա դիտում էր օրիորդին գաղտուկ, իսկ նրա հայեացքից խոյս էր տալիս: Նրանք միմեանցից վախենում էին:

Հետեւեալ օրը տիկինը չը կարողացաւ իրան զսպել: Արդէն օրիորդի անսահման ուրախ տրամադրութիւնը նրան բաւական տանջանք էր պատճառել: Նա փորձեց Քայիանէին խոստովանութեան կանչել, և հանդիպեց անաջողութեան: Օրիորդը բարձրաձայն ծիծաղեց և ասաց, թէ յետոյ կը պատմի: Այդ ծիծաղը սուր ասեղի պէս ցցւեց տիկնոջ սրտին: Նա թշնամաբար նայեց օրիորդին, ատամները կրճտեց և դուրս գնաց սենեակից, դռները ուժգին զարկելով:

Այն ինչ մտնեալ էր Բարաթեանի կազմած թատրոնական ներկայացման օրը: Պէտք է խաղացւէր մի նոր պիես, որ ի պատիւ կանանց ընկերութեան յատկապէս Վերանսերէնից թարգմանել էր Բարաթեանը: Բոլոր մասնակցողները յայտնի ընտանիքներից էին: Տիկին Բախտամեանը զբաղւած էր տոմսակների հաշուով, իսկ Քայիանէն յանձն էր առել նրա օգնականը լինել: Բարաթեանի խորհրդով նա հրաժարւել էր բեմ դուրս գալուց:

Ամբողջ օրը տիկինը և օրիորդը զբաղւած էին, շտապում էին այս ու այն կողմ, մի ամենաշնչին մոռացւած բան նրանց վրդովեցնում էր: Բայց միմեանց հետ շատ քիչ էին խօսում, այն էլ այնքան զգոյշ, որ, կարծես, վախենում էին մի աւելորդ խօսք թռցնել իրանց բերանից:

Իսկ թէ ինչ իրարանցման մէջ էին նրանք, որ պէտք է բեմ դուրս գային, այդ արդէն աննկարագրելի է: Ամեն մէկը նոր հազուստներ էր պատրաստել տալիս, օրը մինչև երեկոյ փորձում էր պէս պէս գլխարկներ, ձեռնոցներ, կօշիկներ: Կառքերը սլանում էին աջ ու ձախ: Փողոցներում միմեանց հանդիպելիս «գործիչ» տիկինները զբաղւած դէմքերով զանազան փոխադարձ նշաններ էին անում: Տիկին Միրզախանեանը ասում էր, թէ կեանքում երբէք այնքան «չէ զգացել», որքան այժմ: Մի խօսքով, շփոթութիւնը անասելի էր:

Եկոնմիստ-Ֆինանսիստ Բարաթեանը հաշուում էր և տեսնում, որ «գործիչ» տիկինները և օրիորդները իրանց զբաղանից աւելի մեծ գումար են ծախսում կառքերի, հազուստների և կօշիկների վրայ, քան թէ կարող էր լինել նոյն իսկ ամենայնաջող ներկայացման արդիւնքը:

(Կը շարունակւի)